«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր

# Հետազոտական աշխատանք

Թեմա՝ «Հեղինակային կրթական ծրագիրը հետազոտական վարժարանում. ներկան և ապագայի հեռանկարները»


***Հեղինակ***՝ *Դավիթ Մուրադյան*

*Հետազոտական վարժարան, 12-րդ դասարան*

***Ղեկավար***՝ *Լուսինե Փաշայան,*

*«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի տնօրեն,*

*Մանկավարժության կենտրոնի ղեկավար*

***Խորհրդատու***՝ *Աշոտ Բլեյան,*

*«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի հիմնադիր-տնօրեն*

***Գրախոսներ***՝ *Տաթև Աբրահամյան, Միջին դպրոցի դասավանդող*

*Սերոբ Խաչատրյան, ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դասախոս*


**Երևան 2026**

# Բովանդակություն

**Ներածություն** 4
**Թեմայի արդիականությունը** 6
**Աշխատանքի կառուցվածքն ու նպատակը** 7
**Աշխատանքի հիմնական խնդիրները** 8
**Գլուխ 1. Եզրութաբանություն** 9
**1.1 «Կրթություն»** 10
**1.2 «Հեղինակային կրթական ծրագիր» և «Պետական այլընտրանքային»** 12
**1.3 Ստույգ սահմանումների ճշգրտման կարևորությունը** 14
**Գլուխ 2. Կրթության նշանակությունը և դրա հասանելիության մարտահրավերները ժամանակակից աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում** 16
**2.1 Կրթությունը՝ ապահով և բարեկեցիկ կյանքի հիմնաքար** 16
**2.2 Կրթության իրավունքի իրացումն ու հասանելիության համաշխարհային մարտահրավերները** 19
1. Հակամարտություններ և բռնություն 20
2. Կրթական միջավայրում բռնության և ճնշման դրսևորումներ (բուլինգ) 21
3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառումը կրթական միջավայր 22
4. Բնակության վայրից մինչև ուսումնական հաստատություն հեռավորություն 22
5. Ուսումնական տարածքների նյութատեխնիկական ապահովվածություն և անբավարար պայմաններ 23
6. Ոչ բավարար պատրաստվածություն չունեցող մանկավարժներ 24
**2.3 ՀՀ հանրակրթական հաստատություններում առկա որոշ առանցքային մարտահրավերներ** 25
1. Հանրակրթական հաստատություններում հոգեբանական ծառայություն մատուցող մասնագետներ 26
2. Դպրոցական կրթության համար անհրաժեշտ գույքային և շենքային ենթակառուցվածք 29
**2.4 Տեսական և գործնական ասպեկտների համադրությունը՝ որպես զարգացման հիմք** 31
**Գլուխ 3. Հեղինակային կրթական ծրագիրը «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում և հետազոտական վարժարանում** 33
**1. Կրթահամալիրի կառավարման մոդելը՝ համագործակցության որակյալ մեթոդ** 34

**2. Ազատ ընտրությունը և կամքի դրսևորումը՝ հեղինակային կրթական ծրագրի անբաժան բաղադրիչ**......40
1. Սովորողի անհատական պլանը ......41
2. Սովորողին առաջարկվող ընտրությամբ խմբերը......43
3. Ակումբային գործունեություն ......46
4. Նախագծային աշխատանքներ ......46
5. Հանդիպումներ ոլորտի մասնագետների հետ......53
6. Արտագնա ուսուցում ճամփորդելու միջոցով ......55
7. Ռազմամարզական բաղադրիչը կրթահամալիրում. Արատես և Արտանիշ ......58
8. Հայրենասիրական բաղադրիչը կրթահամալիրում ......60
9. «Ցտեսություն-ցնծություն» համերգները, վերջին զանգը կրթահամալիրում ......65
**3. Անվանական շաբաթները, ամենամյա հավաքները**......67
3.1 Ամենամյա հավաքների առաքելությունն ու գործառութային նպատակները ......67
3.2 Անվանական շաբաթները, ստուգատեսները, նրանց կազմակերպման կարգը, գաղափարը, նպատակները ......72
**4. Հետազոտական աշխատանքը**......80
**Եզրակացություն** ......85
**Երախտագիտության խոսք** ......88
**Գրականության ցանկ և աղբյուրներ** ......90
**Հավելված**......99

# Ներածություն

*«Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք»*[1]
*ՀՀ Սահմանադրություն, 38-րդ հոդված, կետ 1-ին*

Կրթության անհրաժեշտությունը մարդկանց՝ իբրև բնության այլ արարածներից տարբերվող և բանականություն ունեցող սուբյեկտների կյանքում ժամանակակից համատեքստում ձեռք է բերել ավելի լայն նշանակություն: Մի շարք պատմաբանների, մարդաբանների վերլուծությունները ցույց են տվել, որ քաղաքակրթության վաղ շրջաններում մարդն ավելի քիչ գիտելիքների կարիք ուներ՝ արդյունավետ և անվտանգ կյանք վարելու համար, մինչդեռ մարդկային քաղաքակրթության, տեխնոլոգիական առաջընթացի և սոցիալական նորարարությունների զարգացման հետ մեկտեղ կուտակված փորձը, գիտելիքը, տեղեկատվությունը և հմտությունները չափազանց մեծացել են: Հետևաբար, ժամանակակից անհատին անհրաժեշտ է ավելի հիմնավոր կրթական նախապատրաստություն՝ լիարժեք և բարեկեցիկ հասուն կյանք ունենալու համար:

Կրթության սահմանումների միտումը հանգում է այն տեսակետին, որ մարդը հարուստ ներքին ներուժի մարմնացում է, և կրթության խնդիրն է օգնել նրան զարգացնել, ընդլայնել և իրացնել այդ ներուժը: Այն հավատում է, որ յուրաքանչյուր երեխա ունակ է դառնալ իրավասու մեծահասակ, և որ բնածին ներուժը պետք է շոշափելի լինի ծննդյան պահից և խթանվի նրա աճի և զարգացման ընթացքում՝ մինչև չափահասություն: Մի շարք հռչակավոր փիլիսոփաներ անտիկ ժամանակներից ցայսօր փորձել են սահմանել կրթությունը՝ հաշվի առնելով ժամանակաշրջանի արժեքները, մտածելակերպն ու աշխարհայացքը:

---

[1] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունված՝ 2015թ.
https://www.arlis.am/hy/acts/143723

- **Սոկրատես**. «Կրթությունը նշանակում է այն համընդհանուր արժեք ունեցող գաղափարների դուրսբերում, որոնք թաքնված են յուրաքանչյուր մարդու մտքում»:
- **Պլատոն**. «Կրթությունը ճիշտ պահին հաճույք և ցավ զգալու կարողությունն է: Այն աշակերտի մարմնում և հոգում զարգացնում է այն ամբողջ գեղեցկությունն ու կատարելությունը, որին նա ունակ է»:
- **Արիստոտել**. «Կրթությունը առողջ մարմնում առողջ միտք ստեղծելն է: Այն զարգացնում է մարդու կարողությունները, հատկապես նրա միտքը, որպեսզի նա կարողանա վայելել բարձրագույն ճշմարտության, բարության և գեղեցկության դիտարկումը, որոնցից էապես բաղկացած է կատարյալ երջանկությունը»:
- **Ռուսո**. «Մարդու կրթությունը սկսվում է նրա ծնունդից. մինչ նա կարողանա խոսել, մինչ նա կարողանա հասկանալ, նա արդեն կրթվում է: Փորձառությունը կատարյալի նախակարապետն է»:
- **Մահաթմա Գանդի**. «Կրթություն ասելով՝ ես նկատի ունեմ երեխայի և մարդու մեջ լավագույնի համակողմանի դուրսբերումը՝ մարմին, միտք և հոգի»[2]:

Համաձայն Միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպության (UNESCO) Վիճակագրական ինստիտուտի սահմանման՝ կրթությունը գործընթաց է, որի միջոցով հասարակությունները որոշակի դիտավորությամբ կամ նպատակ հետապնդելով փոխանցում են իրենց կուտակած տեղեկատվությունը, փորձը, գիտելիքները, աշխարհընկալումը, արժեհամակարգը, վերաբերմունքը, հմտությունները, կարողությունները և վարքագիծը սերունդներին[3]:

Չնայած վերոնշյալին՝ պետք է արձանագրենք, որ կրթությունը դինամիկ և համապարփակ է, և նրա հայեցակարգը հստակ ըմբռնելու համար պետք է հիշենք, որ

---

[2] Netaji Subhas Open University, Philosophical and Sociological foundation of Education EED, First edition: November, 2018, Prof. S. S. Sarkar, Concept, *Scope and Aim of Education*, page 7-11 https://www.wbnsou.ac.in/online_services/SLM/BDP/EED%20P-1%20Gr-A,B.pdf

[3] UNESCO, 2011, *The definition of Education*, https://uis.unesco.org/en/glossary-term/education

«կրթություն» տերմինը շատ լայն հասկացություն է: Սա մասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ կրթության իմաստավորումը մեծապես կախված է եղել տարբեր հասարակություններում տեղ գտած արժեքներից և տարբեր համատեքստերում մեծ մտածողների փիլիսոփայական հայացքներից:

## Թեմայի արդիականությունը

Վստահորեն կարելի է պնդել, որ կրթությունն է, որ ապահովում է մարդկային ցեղի (տեսակի) գոյատևումը[4], պահպանում է նրա մտավոր և մշակութային ավանդույթները և նպաստում է լուսավոր քաղաքակրթության զարգացմանը՝ հանուն մարդկանց բարեկեցության և պետության տնտեսական զարգացման, ինչին պատմությունը ականատես է եղել դարերի ընթացքում:

Սակայն, դարերի ընթացքում կրթության նկատմամբ պահանջմունքներն էականորեն փոփոխվել են՝ շարունակաբար հարմարվելով ժամանակի մարտահրավերներին և հնարավորություններին: Իրականում, ժամանակակից՝ արագ փոփոխվող աշխարհում թվացյալ ամենապահպանողական երևույթները, ինչպիսին կրթությունն է, ևս անխուսափելիորեն ենթարկվում են վերափոխման, և կրթական համակարգի շարունակական արդիականացումն ու վերազինումը դառնում են հիմնախնդիր: Սա հատկապես կարևոր է դառնում ներկայիս համատեքստում, երբ ավանդական մոտեցումներն այլևս չեն բավարարում արագ զարգացող հասարակության կարիքներին:

Եվ հենց այս պայմաններում է ի հայտ գալիս **հեղինակային կրթական ծրագրի** անհրաժեշտությունը (նաև առավելությունը)՝ որպես յուրահատուկ և բոլորին հասանելի լուծում, որը կարող է հանդես գալ որպես կրթության զարգացման շարժիչ ուժ:

---

[4] FORUM, 2010, R. Aldrich, *Education for survival*, page (2) 94, https://journals.lwbooks.co.uk/forum/vol-52-issue-1/article-3978/

Սույն հետազոտական աշխատանքն անդրադառնում է այս թեմային՝ ներկայացնելով Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր պետական ոչ առևտրային կազմակերպության՝ հեղինակային կրթական ծրագրերի մշակման և իրականացման հարուստ փորձը, ինչպես նաև դրանց ազդեցությունը սովորողների՝ որպես ապագա լիիրավ, գիտակից քաղաքացիների համակողմանի զարգացման վրա:

## Աշխատանքի կառուցվածքն ու նպատակը

Սույն հետազոտական աշխատանքը, որը բաղկացած է ներածությունից, գլուխներից, մի շարք ենթագլուխներից, եզրակացությունից, հավելվածներից և օգտագործված գրականության ցանկից, հետապնդում է նպատակ՝ գործնականում (տվյալների, սանդղակների, լուսանկարների, տեսանյութերի, անհատների կարծիքների միջոցով և տարբեր թվային տեխնոլոգիաների ներառմամբ) ներկայացնելու հեղինակային կրթական ծրագրի առավելությունները՝ շեշտադրելով դրա իրագործման շնորհիվ տարբեր տարիքային խմբերի սովորողներին ընձեռվող ինքնարտահայտման, ինքնաբացահայտման, համակողմանի զարգացման, ինչպես նաև մասնագիտորեն կողմնորոշվելու համար ստեղծվող բացառիկ հնարավորությունները:

Աշխատանքի նպատակն է ներկայացնել ՀՀ-ում գործող կրթահամալիրի փորձը՝ սովորողի անհատական առանձնահատկությունների, նախասիրությունների և հետաքրքրությունների հիման վրա կառուցված մանկավարժությունը, ինչը, շեշտադրելով ժամանակակից նոր կրթական չափորոշիչները, կարող է օրինակ կամ ուղեցույց հանդիսանալ հանրակրթական և մասնավոր ուսումնական հաստատությունների համար:

## Աշխատանքի հիմնական խնդիրները

«Հեղինակային կրթական ծրագիրը հետազոտական վարժարանում. ներկան և ապագայի հեռանկարները» թեմայով հետազոտական աշխատանքի հիմնական և կարևորագույն խնդիրները հետևյալն են.

- Հեղինակային կրթական ծրագրի առավելությունների վերլուծություն և հիմնավորում՝ սովորողների ինքնարտահայտման, ինքնաբացահայտման և համակողմանի զարգացման գործում ծրագրի դերի շեշտադրմամբ,
- «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի փորձի ներկայացում՝ հեղինակային ծրագրերի իրականացման մեթոդների և գրանցված արդյունքների համադրմամբ,
- Հեղինակային կրթական ծրագրերի համապատասխանության ապահովումը ժամանակակից կրթական չափանիշներին,
- Սովորողների անհատական առանձնահատկությունները հաշվի առնող հեղինակային ծրագրեր ստեղծելու մեթոդաբանական և տեղեկատվական ուղեցույցների մշակում.

# Գլուխ 1.
# Եզրութաբանություն

Այս բաժինը նպատակ ունի հստակեցնել հետազոտության մեջ օգտագործվող հիմնական տերմիններն ու հասկացությունները՝ ապահովելու համար ընդհանուր լեզու և միասնական ըմբռնում ինչպես հետազոտության ընթերցողների կողմից նյութի ընկալման, այնպես էլ ներհետազոտական վերլուծության իրականացման համար։

Բաժնում ներկայացվում են «կրթություն», «կրթության իրավունք», «հեղինակային կրթական ծրագիր», «պետական այլընտրանքային» և փոխկապակցված այլ առանցքային հասկացությունների սահմանումները՝ հիմնված հեղինակավոր ակադեմիական աղբյուրների, իրավաօրենսդրական կարգավորումների և տեսական հիմքերի վրա։ Սույն բաժնի կարևորությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- ա) բացառել տերմինաբանական երկիմաստությունը, որը կարող է առաջանալ տարբեր իմաստների կամ մեկնաբանությունների պատճառով,
- բ) հեշտացնել նյութի ըմբռնումը՝ ընթերցողներին տրամադրելով հստակ և համապարփակ սահմանումներ,
- գ) ապահովել հետազոտության գիտական մակարդակը՝ հիմնվելով սահմանումների ճշգրտության և կիրառելիության վրա,
- դ) կապ հաստատել հետազոտության նպատակների և մեթոդաբանության միջև, ինչը կարևորվում է հատկապես գիտական ուսումնասիրություններում։

Արձանագրում ենք, որ սույն հետազոտական աշխատանքի համար հիմք են ծառայում ՀՀ օրենսդրությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ընդունված իրավական ակտերը, «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի կանոնադրությունը և այլ ներքին իրավական ու կազմակերպական փաստաթղթերը։

## 1.1 «Կրթություն»

Ամերիկյան հեղինակավոր Britannica հանրագիտարանի սահմանման համաձայն՝ «կրթությունը՝ որպես գիտակարգ, վերաբերում է դպրոցական կամ դպրոցանման միջավայրերում դասավանդման և ուսուցման մեթոդներին՝ ի հակադրություն սոցիալականացման տարբեր ոչ ֆորմալ և ոչ պաշտոնական (ինֆորմալ)* միջոցների (օրինակ՝ գյուղական զարգացման ծրագրեր և կրթություն ծնող-երեխա հարաբերությունների միջոցով)։ Կրթությունը դիտարկվում է որպես հասարակության արժեքների և կուտակված գիտելիքների փոխանցում»[5], մինչդեռ մեկ այլ հանրածանոթ ամսագիր (Dictionary), վերստին ձևակերպելով, որ «կրթությունն ընդհանուր գիտելիքներ ձեռք բերելու կամ փոխանցելու գործընթաց է, շեշտը դնում է դատողություններ և վերլուծություններ կատարելու կարողությունների վրա, և ընդհանրապես, կարևորում է, որ անհատն իրեն կամ ուրիշներին մտավոր առումով ունակ լինի պատրաստելու հասուն կյանքի»[6]։

Վերոնշյալը վկայում է այն մասին, որ կրթության համատեքստում, ելնելով բառարանների ձևակերպումներից, հարցը ոչ թե վերաբերելի է տեխնիկական հատվածին (այսինքն՝ որոնք են կրթության պահանջները, որ մոտեցումն է ավելի արդյունավետ), այլ պատճառահետևանքային կապին և գործնականությանը (այսինքն՝ ինչ է այն տալիս մարդկանց և սերունդներին, ինչքանով է նպաստում հասարակության զարգացմանը և որ տեսանկյուններից)։

Հայկական մեդիադաշտում հանրահայտ պարբերականների և թվային բառարանների սահմանումները սկզբունքորեն չեն տարբերվում միջազգային

---

* Ինֆորմալ կրթություն. անձի առօրյա և ընտանեկան կյանքի, հանգստի, ժամանցի, աշխատանքային գործունեության և այլ տարբեր գործողությունների արդյունքում ձեռք բերված ուսումնառության արդյունքներ, որոնք, որպես կանոն, կանխամտածված չեն անձի կողմից որպես նպատակային ուսումնառություն։

[5] Britannica, Last Updated: July 15, 2025, J. Bowen & H. F. Graham, *The definition of Education*, https://www.britannica.com/topic/education

[6] Dictionary.com, *Education*, https://www.dictionary.com/browse/education

բառարանների ձևակերպումներից։ Այստեղ կարևոր է նշել, որ ի տարբերություն ավանդական չափանիշներին և բնորոշիչներին, կրթություն ասելիս հայ հասարակության մի հատված կամա-ակամա պատկերացնում է դաստիարակություն, կամ կրթության տված առանձնահատկությունները ենթագիտակցորեն կապում է դաստիարակության հետ, այդ իսկ պատճառով «Հայերեն օնլայն բառարանի» սահմանման մեջ, ուսումնառությամբ ձեռք բերած գիտելիքների ամբողջության, կրթական մակարդակի և աստիճանի, բարեկրթության կողքին դասվում է նաև դաստիարակությունը[7]։

Անդրադառնալով նորմատիվ-իրավական դաշտին՝ նշենք, որ «Կրթության մասին» ՀՀ օրենքը «կրթություն» եզրույթը ձևակերպում է որպես «անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու ու սերունդներին փոխանցելու համար»[8]։

Այս համատեքստում, որպես պետական գործառույթ, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված քաղաքացիների կրթության իրավունքն իրականացվում է «Հանրակրթության մասին» օրենքի համաձայն։ Այս օրենքը «հանրակրթություն» հասկացությունը սահմանում է որպես «անձի ուսուցման և դաստիարակության գործընթաց, որն իրականացվում է նախադպրոցական, տարրական, հիմնական և միջնակարգ կրթության հիմնական ու լրացուցիչ ծրագրերով»[9], ինչը, ըստ էության, կրթության այն գործնական և ֆորմալ մասն է, որի իրագործման համար պատասխանատու են պետությունը և նրա համապատասխան կառույցները։

---

[7] Հայերեն օնլայն բառարան, 2025, *«կրթություն» բացատրություն*, https://bararan.am/%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6

[8] Հայաստանի Հանրապետության օրենքը կրթության մասին, ընդունված՝ ԱԺ-ի կողմից, 14 ապրիլի, 1999թ., հոդված 3, կետ 1, https://www.arlis.am/hy/acts/91377

[9] Հայաստանի Հանրապետության օրենքը հանրակրթության մասին, ընդունված՝ 10 հուլիսի, 2009թ., հոդված 3, կետ 1, https://www.arlis.am/hy/acts/53007

## 1.2 «Հեղինակային կրթական ծրագիր» և «Պետական այլընտրանքային»

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի կանոնադրության համաձայն՝ կրթահամալիրը պատասխանատու է հեղինակային (պետական այլընտրանքային) ծրագրերի իրագործման, ինչպես նաև ուսուցման մեթոդների և ձևերի մշակման ու ընտրության համար։ Այս ամենը պետք է համապատասխանի պետական կրթական չափորոշիչներին, սովորողների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, նրանց հակումներին ու ընդունակություններին, ինչպես նաև կյանքի անվտանգության, առողջության պահպանման և մանկավարժական պահանջներին (Գլուխ 2, կետ 14)[10]։

Այսուհանդերձ, չնայած կանոնադրության մեջ «հեղինակային կրթական ծրագրի» եզրույթի ստույգ բացատրությունը բացակայում է, այն որևէ կերպ չի ստվերում տվյալ ուսումնական-կրթական հաստատության կողմից իրականացվող ծրագրերը։ Ընդհակառակը, կանոնադրությունը մանրամասն ներկայացնում է կրթահամալիրի գործունեության ամփոփ նկարագիրը և կառուցվածքը, ինչի շնորհիվ այն արդյունավետորեն գործում է որպես **պետականին այլընտրանք հեղինակային կրթական ծրագիր։**

2010 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունված «Հանրակրթության մասին» օրենքում հեղինակային կրթական ծրագրի մասին մասնավորապես նշվում է. «այլընտրանքային կրթական ծրագրի տեսակ է, որը միջազգային չափանիշներով ճանաչված (վկայագրված) է որպես հեղինակային կամ ստեղծված, մշակված և ներդրված է մանկավարժական որոշակի համակազմի կամ կառավարման մարմնի

---

[10] ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կանոնադրություն, հաստատված՝ ՀՀ ԿԳՆ նախարարի 259-Ն հրամանով, 25 մարտի, 2003թ., https://mskh.am/posts/post/_id/67d3b761816fd94b6318ad8e

(մարմինների) կողմից»[11]։

2022 թվականի փետրվարի 9-ին փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, ըստ որոնց, հեղինակային կրթական ծրագիրը պահպանել է իր այլընտրանքային ծրագրի տեսակը (կետ 6.3), սակայն չի պահպանել բացատրությունը։ Այլընտրանքայինը ձևակերպվել է որպես «հանրակրթական ծրագրից ուսումնական պլանով, ուսուցման կազմակերպման ձևով և առարկայական ծրագրերով տարբերվող, հանրակրթական պետական չափորոշչի վերջնարդյունքներն ու կարողունակություններն ապահովող և օրենսդրությամբ սահմանված կարգով որպես այլընտրանքային երաշխավորված հանրակրթական ծրագիր»[12]։

Այսպիսով, հաշվի առնելով վերոնշյալ օրենսդրական հոդվածներն ու կատարված փոփոխությունները, արձանագրում ենք, որ ՀՀ-ում կառուցվածքային փոփոխություններ են կատարվել հեղինակային-ալընտրանքային կրթական ծրագրերի շրջանում։

Միջազգային մի շարք կրթական հաստատությունների բացատրության համաձայն՝ այլընտրանքային կրթությունն ապահովում է կրթական ծրագիր, որն առկա չէ ավանդական դպրոցական ծրագրերում։ Սա կարող է լինել առցանց կրթական համակարգ, որի նպատակն է բավարարել սովորողների ուսումնական և սոցիալ-էմոցիոնալ կարիքները, որոնք պատշաճ կերպով չեն բավարարվում ավանդական միջավայրում։ Այլընտրանքային կրթությունը հաշվի է առնում յուրաքանչյուր սովորողի տաղանդներն ու ուժեղ կողմերը։ Վերոգրյալ պատճառներով, ներառյալ մասնավոր կրթության ծախսերի աճը, ավելանում է այլընտրանքային կրթությունն ընտրող անձանց թիվը[13]։

---

[11] ՀՀ օրենքը «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին, ընդունված՝ 22 դեկտեմբերի, 2010թ., https://www.arlis.am/hy/acts/65009

[12] ՀՀ օրենքը «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, ընդունված՝ 9 փետրվարի, 2022թ., https://www.arlis.am/hy/acts/160449

[13] 21K School, Where Every Learner Finds Their Path, Last Updated: 21 May, 2025, S. Sourabh & Shruti M, *What is Alternate Education?*, https://www.21kschool.com/in/blog/what-is-alternate-education/

Չնայած բազմաթիվ ուսումնական կենտրոններ այլընտրանքային հեղինակային կրթական ծրագրի ներքո հասկանում են անհատների տաղանդների առավել կարևորումը, ականավոր պարբերականներ այն սահմանում են հետևյալ կերպ. «կրթական ծրագիր կամ համակարգ, որն առանձնացված է հիմնական կրթական ծրագրից կամ համակարգից և նախատեսված է հատկապես ուսումնական կամ վարքային դժվարություններ ունեցող սովորողների համար»: Արձանագրենք, որ պատմության մեջ առաջին անգամ «այլընտրանքային կրթություն» եզրույթը կիրառվել է 1978 թվականին՝ շուրջ 50 տարի առաջ[14]: Հետևաբար, տարիների ընթացքում առաջարկված տարընկալումներն ու բացատրությունները, հիմնված ժողովուրդների և ազգերի մշակութային-սոցիալական առանձնահատկությունների վրա, ըմբռնելի են:

## 1.3 Ստույգ սահմանումների ճշգրտման կարևորությունը

Ինչպես նշվեց վերևում՝ նմանատիպ հետազոտական աշխատանքի շրջանակներում «կրթություն», «հեղինակային կրթություն» և «հեղինակային կրթական ծրագիր» տերմինների տարանջատումն ու սահմանումների ճշգրտումն առանցքային նշանակություն ունեն: Առանց ստույգ սահմանումների և դրանց միջև եղած տարբերությունների ըմբռնման՝ հետազոտության արդյունքները կարող են լինել ոչ ամբողջական կամ թերի մեկնաբանվել:

Կրթություն հասկացությունը շատ լայն է և ընդգրկում է գիտելիքների, հմտությունների, արժեքների և վարքագծի ձևավորման, դաստիարակության, տեղեկության ձեռքբերման ցանկացած գործընթաց: Այն կարող է լինել ինչպես ֆորմալ (դպրոցական, համալսարանական), այնպես էլ ոչ ֆորմալ կամ ոչ պաշտոնական (ինֆորմալ): Մինչդեռ հեղինակային կրթությունն ավելի նեղ հասկացություն է՝ վերաբերում է կրթության այն ձևին, որի հիմքում ընկած է որոշակի անհատի կամ խմբի

[14] Merriam-Webster, Accessed: 14 August, 2025, *Alternative Education Noun*, https://www.merriam-webster.com/dictionary/alternative%20education

կողմից մշակված յուրահատուկ փիլիսոփայությունն ու արժեհամակարգը՝ սեփական սկզբունքներով և մոտեցումներով՝ անշուշտ համապատասխանելով պետական չափորոշիչներին և կարգերին (կանդրադառնանք հաջորդիվ)։ Այն հաճախ մարմնավորվում է կոնկրետ կրթական հաստատություններում կամ կրթահամալիրներում և հիմնականում ասոցացվում է նրանց հետ։

Իսկ «հեղինակային կրթական ծրագիրը» առավելագույնս կոնկրետացնում է այս հասկացությունները՝ վերաբերելով տվյալ հեղինակային կրթության շրջանակներում մշակված ուսումնական պլաններին, բովանդակությանը, մեթոդաբանությանը, գնահատման համակարգին և այլ տեխնիկա-կազմակերպչական հարցերին։ Ըստ էության՝ այն հեղինակային կրթության տեսական հիմքերի և դրույթների գործնականում արտացոլման և իրագործման միջոց է։

Այսպիսով, ելնելով հետազոտական աշխատանքի մեթոդաբանությունից և առաջնահերթություններից և ձգտելով պահպանել առարկայականությունը (օբյեկտիվություն) ու բազմակողմանի մոտեցումը՝ արձանագրենք, որ այսուհետ աշխատանքը եթե ոչ բացառապես, ապա առավելապես հիմնվելու է ՀՀ օրենսդրության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, միջազգային կազմակերպությունների տվյալների, ակտերի, «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի կանոնադրության և ծրագրերի վրա, և իր հետագա վերլուծությունն իրականացնելու է՝ հաշվի առնելով դրանք։

# Գլուխ 2.
# Կրթության նշանակությունը և դրա հասանելիության մարտահրավերները ժամանակակից աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում

## 2.1 Կրթությունը՝ ապահով և բարեկեցիկ կյանքի հիմնաքար

Կրթությունը կենսական դեր է խաղում անհատի կյանքում՝ հանդիսանալով ապագա հաջողությունների և բազմաթիվ հնարավորությունների բանալին: Այն զգալի առավելություններ է ընձեռում անձանց՝ ընդլայնելով նրանց մտահորիզոնը և խթանելով քննադատական մտածողությունը:

Կրթությունը հնարավորություն է ընձեռում սովորողներին արդյունավետորեն պլանավորելու իրենց մասնագիտական ուղին կամ շարունակելու կրթությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում: Որոշակի ոլորտում խորացված կրթության առկայությունը նպաստում է, որ անձինք ոչ միայն զարգացնեն իրենց մտածողության, զգացմունքային արձագանքների և վարքագծի համապատասխան մոդելներ, որոնք կնպաստեն իրենց հաջողությանը, այլև բարելավեն իրենց անձնական բավարարվածությունը և խթանեն համայնքային զարգացումը:

Բացի այդ, կրթությունը նպաստում է մարդկային անհատականության համակողմանի զարգացմանը, մտավոր կարողությունների ընդլայնմանը և սոցիալական հմտությունների կատարելագործմանը: Այն նաև անձանց նախապատրաստում է կյանքի բազմազան մարտահրավերներին՝ շնորհելով նրանց հստակ կարգավիճակ իրենց հասարակության և բնակության վայրի ցանկացած միջավայրում: Յուրաքանչյուր ոք ունի կրթություն ստանալու իրավունք՝ «օրորոցից մինչև գերեզման» սկզբունքով: Կրթություն ունենալու բազմաթիվ առավելություններ

կան, ինչպիսիք են՝ հաջող կարիերայի հնարավորությունը, հասարակության մեջ բարձր կարգավիճակը և ամուր ինքնավստահության զարգացումը[15]:

Մինչ այժմ, բացառությամբ հատուկ դեպքերի, մենք առնչվել ենք կրթությանը որպես ցանկացած սոցիալական խմբում գոյություն ունեցող ընդհանուր երևույթ: Այժմ, սակայն, անհրաժեշտ է հստակեցնել կրթության ոգու, բովանդակության և մեթոդի տարբերությունները՝ կախված համայնքային կյանքի տարբեր տեսակներից:

Հաստատել, որ կրթությունը սոցիալական գործառույթ է, որն ապահովում է անհասուն անհատների ուղղորդումն ու զարգացումը՝ իրենց պատկանող խմբի կյանքին մասնակցելու միջոցով, նշանակում է, որ կրթությունը կտարբերվի տվյալ խմբում գերակշռող կյանքի որակից: Սա հատկապես ճիշտ է այն հասարակությունների համար, որոնք ոչ միայն փոփոխվում են, այլև ունեն փոփոխության իդեալ՝ ուղղված իրենց բարելավմանը: Նման հասարակությունները կունենան կրթության այլ չափորոշիչներ և մեթոդներ, քան այն հասարակությունները, որոնց նպատակը պարզապես սեփական սովորույթների հավերժացումն է:

Հետևաբար, ներկայացված ընդհանուր գաղափարները մեր սեփական կրթական պրակտիկայում կիրառելի դարձնելու համար անհրաժեշտ է ավելի մանրամասն ուսումնասիրել ներկա սոցիալական կյանքի բնույթը:

Յուրաքանչյուր հասարակության, համայնքի և անհատի կարիքները տարբեր են, և կրթական համակարգը պետք է լինի բավականաչափ ճկուն՝ արձագանքելու այդ բազմազանությանը[16]: Այսինքն՝ իդեալական կրթությունը, եթե նմանատիպը երբևէ կարող է լինել, պետք է ոչ միայն արտացոլի հասարակության արդի վիճակը, այլև նպաստի դրա զարգացմանը՝ պատրաստելով անհատներին ապագայի մարտահրավերներին: Սա ենթադրում է ուսումնական ծրագրերի անընդհատ

[15] ResearchGate, Salalah College of Technology, January 2014, A. Al-Shuaibi, *The importance of Education*, https://www.researchgate.net/publication/260075970_The_Importance_of_Education
[16] A Penn State Electronic Classics Series Publication, The Pennsylvania State University, 2001, J. Dewey, *Democracy and Education*, page 14 & 85, https://nsee.memberclicks.net/assets/docs/KnowledgeCenter/BuildingExpEduc/BooksReports/10.%20democracy%20and%20education%20by%20dewey.pdf

վերանայում, դասավանդման մեթոդների նորարարություն և կրթական միջավայրի հարմարեցում՝ ապահովելով, որ յուրաքանչյուր սովորող ստանա այն գիտելիքներն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ են իր անձնական և համայնքային ներուժն իրացնելու համար։

Կրթությունն ունի ամենամեծ ազդեցությունը հասարակության զարգացման վրա։ Այդ իսկ պատճառով, և ոչ միայն դրանով պայմանավորված, մշտապես աճում է տարբեր պետությունների կառավարությունների և առաջատար հաստատությունների կողմից հետաքրքրությունը կրթության՝ իբրև առաջնահերթություն դիտարկելու նկատմամբ։ Սա պայմանավորված է ոչ միայն քաղաքացիների կարիքներով, այլև կրթությունը որպես զարգացման կարևորագույն գործոն ընդունելու մոտեցմամբ։

Կրթությունը զարգացնելու ցանկություն ունենալը բավարար չէ։ Այս համատեքստում աջակցությունը, լինելով բավականին ծախսատար, կենսական նշանակություն ունի հասարակության կարիքներին համապատասխանող որակյալ և արդյունավետ կրթություն ապահովելու համար։

Ուսումնասիրելով կրթության և հասարակության պատմական զարգացումը՝ կարելի է նկատել, որ տարբեր ժամանակներում և տարբեր հասարակություններում մարդիկ ունեցել են տարբեր պահանջներ կրթության մակարդակի և որակի նկատմամբ՝ կախված նրանց բնակության վայրից, դավանած արժեքներից և սկզբունքներից, դաստիարակությունից և իհարկե պահանջմունքներից։

Կրթությունն անհրաժեշտ է՝ հնարավորություն տալու անհատին կառուցել իր կյանքը, դիմակայել ժամանակի մարտահրավերներին և լինել հասարակության լիիրավ անդամ և պետության արժանապատիվ քաղաքացի, ինչպես նաև ակտիվ մասնակցություն ունենալ հասարակական կյանքին և այն առողջ դարձնել՝ դրա արժեքներին և գործունեությանը նպաստելու իմաստով[17]։

---

[17] ResearchGate, Dardania College (Prishtina, Kosovo), December 2023, F. Hysa & R. Jakupi, *Education Is A Key Tool In The Development Of Society And Educational Leadership And Is A Key Element For Effective School And Education*, https://www.researchgate.net/publication/380198035_Education_Is_A_Key_Tool_In_The_Development_Of_Society_And_Educational_Leadership_And_Is_A_Key_Element_For_Effective_School_And_Education

## 2.2 Կրթության իրավունքի իրացումն ու հասանելիության համաշխարհային մարտահրավերները

Կրթությունը կարող է նպաստել մարդկանց՝ աղքատության վիճակից դուրս գալուն, բարելավել առողջությունը և փոխակերպել վերաբերմունքը՝ նրանց տրամադրելով կենսական անհրաժեշտության հմտություններ: Այն երեխաներին տալիս է գոյատևելու և զարգանալու համար անհրաժեշտ հմտություններ՝ բացելով դռները դեպի աշխատատեղեր, ռեսուրսներ և այն ամենը, ինչ անհրաժեշտ է լիարժեք, ստեղծագործ կյանքով ապրելու համար[18]: Բոլոր երեխաներն արժանի են որակյալ կրթության հասանելիության՝ անկախ հարստությունից կամ սեռից: Թեև տեխնոլոգիան կարող է բարելավել հասանելիությունը, սակայն պետք է ներդրվի խոհեմորեն:

Այսօր աշխարհում կրթված մարդկանց թիվն ավելի շատ է, քան երբևէ: 1820 թվականին աշխարհի բնակչության ընդամենը 12%-ն էր կարողանում կարդալ և գրել: Այսօր պատկերը հակառակն է՝ աշխարհի բնակչության ընդամենը 17%-ն է մնում անգրագետ: Տարրական դպրոց ընդունելությունը ներկայումս գրեթե համընդհանուր է շատ պետություններում, որտեղ աղջիկները տղաների պես մեծ թվով են ընդգրկվում կրթական համակարգում:

Այնուամենայնիվ, այս տվյալները ստվերում են շարունակական անհավասարության ազդեցությունը: 2016 թվականին տարրական դպրոցի տարիքի մոտ 63 միլիոն երեխա դուրս էր մնացել դպրոցից, իսկ տարրական դպրոց ընդունելության առաջընթացը մնում է անփոփոխ: Հիմնական կրթության բացակայությունը հանդիսանում է զարգացման խոչընդոտ, որն առավել շատ

[18] Concern Worldwide, 12 August 2024, *10 of the biggest problems facing education*, https://www.concern.net/news/problems-with-education-around-the-world

անդրադառնում է սոցիալապես խոցելի և աղքատ երկրների վրա[19]։

Ուշագրավ է, բայց կրթության հասանելիության մեծացումը, հատկապես զարգացող երկրներում, ոչ միայն կարող է բարելավել հասարակության ընդհանուր առողջությունն ու երկարակեցությունը, խթանել տնտեսական աճը, այլ նաև նպաստել կլիմայական փոփոխությունների դեմ պայքարին[20]։ Այնուամենայնիվ, զարգացող շատ երկրներում երեխաների կրթության հասանելիությունը կարող է և սահմանափակվում է բազմաթիվ գործոններով։

Հետաքրքրական է, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն* հայտնում է, որ «եթե ցածր եկամուտ ունեցող երկրների բոլոր աշակերտներն ունենային ընդամենը տարրական ընթերցանության հմտություններ, ապա մոտ 171 միլիոն մարդ կարող էր դուրս գալ աղքատության շրջապտույտից։ Իսկ եթե բոլոր չափահասներն ավարտեին իրենց միջնակարգ կրթությունը, մենք կարող էինք համաշխարհային աղքատության մակարդակը կրճատել ավելի քան կիսով չափ»։

Այսպիսով, ստորև կփորձենք հասկանալ, թե որոնք են կրթության հասանելիության հիմնական խոչընդոտները համայն աշխարհում։

## 1. Հակամարտություններ և բռնություն

Հակամարտությունը մնում է երեխաների՝ կրթությունից զրկվելու հիմնական պատճառներից մեկը։ USAID-ի գնահատականներով՝ դպրոց չհաճախող բոլոր երեխաների կեսը՝ մոտ 125 միլիոնը, ապրում է հակամարտության գոտում։ Աճող

[19] The HUMAN JOURNEY, A project of the Institute for the Study of Human Knowledge, Last Updated: 2025, *Education in the Developing World*, https://humanjourney.us/health/education-for-a-changing-world/education-in-the-developing-world/

[20] Giving Compass, Curated Article | Global Citizen, *10 Barriers to Education Around the World*, https://givingcompass.org/article/10-barriers-to-education-around-the-world

* Միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպությունը (United Nations Educational, Scientific and Cultural Organization, UNESCO) ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալություն է, որը հիմնադրվել է Փարիզում։ Կազմակերպության հռչակած նպատակն է նպաստել խաղաղության և անվտանգության պահպանմանը՝ զարկ տալով միջազգային համագործակցությանը կրթության, գիտության և մշակույթի բնագավառներում բարեփոխումների իրականացման միջոցով։

խնդրի մասին պատկերացում կազմելու համար նշենք, որ 2013 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ն հայտնել էր, որ հակամարտության պատճառով 50 միլիոն աշակերտ դուրս էր մնացել կրթական համակարգից[21]։

Կրթությունը կենսական նշանակություն ունի հակամարտությունների ժամանակ, քանի որ այն պաշտպանում է երեխաներին հարկադիր զորակոչից և հնարավոր հարձակումներից։ Այն նաև կարևորագույն բաղադրիչ է որոշակի տարածքներում ապագա հակամարտությունների հավանականությունը նվազեցնելու գործում։ Սակայն, չնայած միջազգային մարդասիրական իրավունքին, դպրոցները դարձել են հարձակումների թիրախ՝ վերջին շրջանի բազմաթիվ հակամարտությունների ընթացքում։

## 2. Կրթական միջավայրում բռնության և ճնշման դրսևորումներ (բուլինգ)

Բռնությունն արտաքին միջավայրից կարող է տեղափոխվել նաև դասասենյակ։ ՄԱԿ-ի մեկ ուսումնասիրությունը ցույց է տվել, որ թեև 102 պետություն արգելել է բուլինգը դպրոցներում, այդ արգելքը միշտ չէ, որ կիրառվում է։ Երեխաները հաճախ ընդհանրապես դուրս են մնում դպրոցից՝ խուսափելու համար նման իրավիճակներից։ Նույնիսկ երբ նրանք շարունակում են հաճախել դպրոց, իրենց կրած բռնության հետևանքները կարող են ազդել նրանց սոցիալական հմտությունների, հոգեբանական կայունության և ինքնագնահատականի վրա։ Այս ամենից ելնելով՝ սովորողի մոտ նվազում են կրթական նվաճումներն ու առաջընթացը։

[21] TheGuardian, 12 July 2013, M. Tran, *War denying millions of children an education*, https://www.theguardian.com/global-development/2013/jul/12/war-denying-children-education

## 3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառումը կրթական միջավայր

Կրթության առանձնահատուկ կարիք (նաև օժտվածություն) ունեցող երեխաների բացառումը կրթական համակարգից լուրջ խնդիր է, որը սահմանափակում է նրանց զարգացման և հասարակական ինտեգրման հնարավորությունները: Դա հաճախ պայմանավորված է ֆիզիկական անհասանելիությամբ, ուսուցիչների անբավարար պատրաստվածությամբ կամ խտրական վերաբերմունքով: Նման բացառումը ոչ միայն խախտում է նրանց կրթության իրավունքը, այլև հանգեցնում է սոցիալական մեկուսացման և ցածր ինքնագնահատականի:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառումը կրթական միջավայրում նպաստում է նաև մյուս սովորողների սոցիալ-էմոցիոնալ զարգացմանը՝ դարձնելով նրանց ավելի ընկերասեր, կարեկից, հանդուրժող և հոգատար: Այս գործընթացն էապես բարձրացնում ու ամրապնդում է համագործակցության և փոխօգնության մշակույթը: Այսպիսով, ներառական կրթության բացակայությունը կորուստ է ոչ միայն անհատի, այլև ամբողջ հասարակության համար:

## 4. Բնակության վայրից մինչև ուսումնական հաստատություն հեռավորություն

Դպրոցից հեռու բնակվելը զգալի խոչընդոտ է երեխաների կրթության հասանելիության համար, հատկապես հեռավոր կամ գյուղական համայնքներում: Երեխաները հաճախ ստիպված են լինում ամեն օր երկար ճանապարհ անցնել, ինչը հանգեցնում է հոգնածության, ուսման մոտիվացիայի նվազման և դպրոցից բացակայությունների աճի: Բացի ֆիզիկական դժվարություններից, տրանսպորտային խնդիրները և ճանապարհին առաջացող անվտանգության մտահոգությունները,

հատկապես աղջիկների համար, ստիպում են ծնողներին չուղարկել իրենց երեխաներին դպրոց։ Այս բոլոր գործոնները միասին հանգեցնում են դպրոցից դուրս մնացող երեխաների թվի ավելացմանը և նրանց կրթական նվաճումների նվազմանը։

Տարածքային հեռավորության խնդրի հաղթահարումը պահանջում է համապարփակ մոտեցում, որը կներառի տրանսպորտային համակարգերի բարելավում, դպրոցների ցանցի ընդլայնում և համայնքային կրթական նախաձեռնությունների աջակցություն՝ ապահովելով բոլոր երեխաների համար որակյալ կրթության հասանելիությունը։

Խնդիրը, ըստ էության, սերտ առնչություն ունի նաև մարդու, այս դեպքում՝ սովորողի՝ կրթության ձևի և վայրի ընտրության իրավունքի իրացման հետ։

## 5. Ուսումնական տարածքների նյութատեխնիկական ապահովվածություն և անբավարար պայմաններ

Կրթության հասանելիության և որակի լուրջ խոչընդոտներից մեկը դասասենյակների անբավարար կահավորումն է կամ դրանց ընդհանրապես բացակայությունը, հատկապես աղքատ և զարգացող երկրներում։ Շատ համայնքներում, երբ դպրոցներ գոյություն ունեն, դրանց պայմանները հաճախ անբավարար են՝ նվազեցնելով ուսուցման արդյունավետությունը և վտանգելով աշակերտների առողջությունն ու անվտանգությունը։ Սա դրսևորվում է հիմնական պարագաների (նստարաններ, սեղաններ, գրատախտակներ) բացակայությամբ, խարխուլ շենքերով՝ առանց պատշաճ ջեռուցման կամ սանհանգույցների, ինչպես նաև տեխնիկական միջոցների և դրանց լիցքավորման հնարավորությունների պակասով։

Այն վայրերում, որտեղ դպրոցներն ու դասասենյակներն ընդհանրապես բացակայում են, երեխաները ստիպված են լինում սովորել բաց երկնքի տակ կամ ժամանակավոր կացարաններում։ Նման պայմաններում դասապրոցեսը խիստ անկայուն է դառնում, խաթարվում է ուսուցման շարունակականությունը, և

աշակերտները զրկվում են կայուն ու խթանող ուսումնական միջավայրից: Սա հատկապես ակնհայտ է հակամարտությունների գոտիներում կամ բնական աղետներից տուժած տարածքներում:

Արդյունքում, հազարավոր երեխաներ մնում են կրթությունից դուրս կամ ստանում են անորակ կրթություն, ինչն ուղղակիորեն ազդում է նրանց ապագա կյանքի հնարավորությունների վրա և խաթարում հասարակության զարգացումը:

## 6. Ոչ բավարար պատրաստվածություն չունեցող մանկավարժներ

Կրթական համակարգում զարգացող ամենալուրջ խնդիրներից մեկը համապատասխան որակավորում չունեցող մասնագետների ներգրավումն է, հատկապես հեռավոր կամ ֆինանսապես սահմանափակ համայնքների դպրոցներում: Սա նշանակում է, որ տվյալ առարկան դասավանդում է մեկը, ով չունի համապատասխան մասնագիտական կրթություն կամ բավարար մանկավարժական որակավորում: Նման իրավիճակում խաթարվում է ուսուցման որակը, քանի որ ոչ մասնագետ ուսուցիչները հաճախ չեն տիրապետում առարկայի խորքային գիտելիքներին, արդյունավետ դասավանդման մեթոդներին կամ աշակերտների կարիքներին համապատասխանող մոտեցումներին: Սա բացասաբար է անդրադառնում աշակերտների ակադեմիական առաջադիմության, մոտիվացիայի և գիտելիքների համակողմանի յուրացման վրա[22]:

Այսպիսով, վերոնշյալում քննարկեցինք վեց կարևորագույն և հիմնական խոչընդոտները, որոնք ուղղակիորեն խաթարում են կրթության հասանելիությունն ու որակը: Քաջատեղյակ լինելով նման խնդիրների լուծմանն ուղղված տարբեր պետությունների կառավարությունների ծրագրերի, համապատասխան մարմինների և կառույցների, հասարակական կազմակերպությունների և միավորումների ջանքերի ու

[22] Նույն տեղից, 20

քայլերի մասին, ինչպես նաև ձգտելով հարցը կենտրոնացնել հայկական իրականության վրա՝ այժմ կանդրադառնանք հայաստանյան դպրոցներում առավել հաճախ հանդիպող մարտահրավերներին։

## 2.3 ՀՀ հանրակրթական հաստատություններում առկա որոշ առանցքային մարտահրավերներ

ՅՈՒՆԻՍԵՖ-ի* Հայաստանի գրասենյակը տարիներ առաջ հրապարակեց *«ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակը աջակցում է կառավարությանը բոլոր դպրոցները ներառական և երեխայակենտրոն դարձնելու հարցում»* վերնագրով հոդված, որում որակյալ և արդյունավետ կրթությանը խոչընդոտող գործոնների հատվածում մասնավորապես նշվում էր[23].

*«Չնայած կրթության իրավունքի իրականացման գործում զգալի նվաճումներին, խոցելի խմբերի երեխաները հաճախ ենթարկվում են խտրականության, և հաճախ առանձնացվում են Հայաստանի կրթական համակարգում։ Նրանք չեն հայտնվում ազգային վիճակագրության մեջ՝ դառնալով «անտեսանելի»՝ որոշում ընդունողների, ծառայություն մատուցողների և հանրության համար։*

*Վերջին տարիներին ընդհանուր կրթության ոլորտում համախառն ընդգրկվածության մակարդակը միջինում կազմել է մոտ 90%, մինչդեռ ավագ դպրոցի բարձր դասարաններում ընդգրկվածությունը կազմում է մոտ 74%։ Չնայած դպրոցից դուրս մնացած կամ դպրոցը թողնելու վտանգի տակ գտնվող երեխաներին հետևելու*

* ՄԱԿ-ի Միջազգային արտակարգ մանկական հիմնադրամ անվանումով հիմնադրամը (անգլ.՝ United Nations International Children's Emergency Fund, ՅՈՒՆԻՍԵՖ, UNICEF) ստեղծվել է 1946 թվականի դեկտեմբերի 11-ին ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի որոշումով՝ որպես Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում տուժած երեխաներին օգնություն ցուցաբերող արտակարգ կազմակերպություն։

[23] UNICEF for every child, Armenia, 2018, *UNICEF Armenia supports the Government in making all schools inclusive and child-focused*, https://www.unicef.org/armenia/en/what-we-do/education

*ազգային մեխանիզմներ չկան, դպրոց չհաճախելու հետ կապված ամենատարածված ռիսկի գործոններն են հաշմանդամությունը, ծայրահեղ աղքատությունը, մանկական աշխատանքը, էթնիկ պատկանելությունը և փախստականի կարգավիճակը։*

*Հաշմանդամություն ունեցող երեխաները, մասնավորապես՝ հոգեսոցիալական խնդիրներ ունեցող աղջիկներն ու տղաները, շարունակում են խոչընդոտների հանդիպել կրթության և սոցիալական ծառայությունների հասանելիության հարցում՝ պայմանավորված տարածված համոզմունքով, որ մտավոր խնդիրներ ունեցող երեխան պետք է ապրի և կրթություն ստանա խնամքի հաստատություններում»։*

Այժմ, վստահորեն կարելի է պնդել, որ իրավիճակը՝ կապված ներառական միջավայրի ստեղծման, առանձնահատուկ կարիքներով երեխաների՝ կրթական գործընթացում ներգրավվելու, համապատասխան գույքի և կահույքի ձեռքբերման ու ապահովման, տարածքների անվտանգության հետ, բարելավվել է, և որ ՀՀ կառավարության կողմից մեկնարկած մինչև 2026 թվականը 300 դպրոցի ու 500 մանկապարտեզի նորոգման, կառուցման և վերակառուցման ծրագիրը[24], համաձայն ՅՈՒՆԻՍԵՖ-ի հրապարակման մեջ տեղ գտած առաջարկների և սկզբունքների, հաջողությամբ ընթանում է՝ պահպանելով բոլոր միջազգային չափանիշները։

Այսուհանդերձ, մի շարք փորձագետներ և ոլորտային մասնագետներ ընդգծում են երկու հիմնական էական խնդիր, որոնք դեռևս մնում են անլուծելի կամ լուծված են մասնակիորեն։ Առաջարկում ենք ծանոթանալ դրանց։

## 1. Հանրակրթական հաստատություններում հոգեբանական ծառայություն մատուցող մասնագետներ

Տարիներ առաջ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում (ՀՊՄՀ) տեղի ունեցավ «Դպրոցական

---

[24] ՀՀ ԿԳՄՍՆ, հոդված, 18 օգոստոսի, 2023, *««300 դպրոց, 500 մանկապարտեզ» ՀՀ կառավարության ծրագիրն ընթացքի մեջ է»*, https://escs.am/am/news/17749

հոգեբանական ծառայության հիմնախնդիրները» խորագրով գիտաժողով[25], որը քննարկեց, թե որքան կարևոր է դպրոցական հոգեբանների առկայությունը՝ դպրոցահասակ պատանիներին անհրաժեշտ հոգեբանական օժանդակության մատուցման տեսանկյունից: Մասնակից-մասնագետները համակարծիք էին, որ Հայաստանի բոլոր դպրոցներին անհրաժեշտ են հոգեբաններ կամ հոգեբանական ծառայություններ մատուցողներ, և միաժամանակ պնդում էին, որ «դպրոցում ի հայտ եկող խնդիրների մեծամասնությունը, այդ թվում՝ դաստիարակության հետ կապված հարցերը, հոգեբանական բնույթի են»: Այդ ժամանակ ՀՀ կրթության ու գիտության նախարարությունից մասնագետներին հայտնել էին, որ հոգեբանի հաստիքը հանրակրթական դպրոցներում պարտադիր չէ, եթե այն ներառական կրթական ծրագիր չի իրականացնում[26]:

Այս պահի դրությամբ դպրոցներում հոգեբանի առկայությունը ձեռք է բերել հստակ պահանջվածության բնույթ, ինչը հաստատվում է ինչպես միջազգային փորձով (օրինակ՝ Ֆինլանդիայի և Կանադայի դպրոցներում հոգեբանական աջակցությունը ցույց է տվել ուսումնական արդյունքների և սոցիալական հարմարվողականության աճ), այնպես էլ ազգային փորձով, որտեղ հոգեբանի ներգրավվածությունը նպաստում է աշակերտների էմոցիոնալ և կրթական բարեկեցությանը:

Սույն թվականի ապրիլի սկզբին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ) և Հայկական պետական մանկավարժական համալսարանի համագործակցությամբ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը կազմակերպել էր «Ապահով դպրոց. կրթություն առանց բուլինգի» թեմայով մանկավարժական

---

[25] ResearchGate, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Գիտաժողովի նյութեր, Երևան 2014, *«Դպրոցական հոգեբանական ծառայության հիմնախնդիրները»,* https://www.researchgate.net/profile/Madlena-Arakelyan-2/publication/341764855_PSIHOLOG_V_SKOLE_DELOVYE_OTNOSENIA/links/5ed2903b299bf1c67d27ae5a/PSIHOLOG-V-SKOLE-DELOVYE-OTNOSENIA.pdf

[26] ԱՐՄԵՆՊՐԵՍ, հոդված, 6 նոյեմբերի, 2014, *«Դպրոցներում հոգեբաններն անհրաժեշտություն են. մասնագետները տեսագործնական մեթոդներ են մշակում»,* https://armenpress.am/hy/article/782962

աշխատաժողովը, որի շրջանակներում հանդես գալով ելույթով, ՀՀ ԿԳՄՍ փոխնախարար Արաքսիա Սվաջյանը հոգեբանների կարևորության մասին իր խոսքում մասնավորապես նշել էր.

*«Դպրոցում հոգեբանն ամենակարևոր գործառույթներ իրականացնող մասնագետներից մեկն է: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը բազմաթիվ աշխատանքներ է իրականացնում՝ հոգեբանների գործառույթների շրջանակը նկարագրելու, ինչպես նաև ՅՈՒՆԻՍԵՖ-ի, Համաշխարհային բանկի, միջազգային և տեղական այլ գործընկերների հետ համագործակցությամբ մեթոդական աջակցություն ցուցաբերելու և այս օղակում կարողությունների զարգացման ծրագրեր իրականացնելու նպատակով:*

*Դեռևս ունենք հոգեբանների համալրման խնդիր. դպրոցներում առկա են շուրջ 800 հոգեբանների ազատ հաստիքներ: Հոգեբաններ չկան հիմնականում գյուղական բնակավայրերի դպրոցներում, որոնցում մասնագիտական ռեսուրսների խնդիրն ավելի լուրջ է: Պարբերաբար հետևում ենք թափուր հաստիքների համալրման վիճակագրությանը՝ զուգահեռաբար փորձելով համալրել հոգեբանների հաստիքները տարբեր ծրագրերով»*[27]:

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ կայուն և զարգացած երիտասարդություն ունենալու համար կրթական ռազմավարությունների մշակման և իրականացման գործում կարևորվել է հոգեբանների (ինչպես նաև վերապատրաստված բուժքույրերի) ներգրավումն ուսումնական գործընթացում: Նրանց դերը մեծ է՝ ծագող խնդիրներին արդյունավետ լուծումներ տալու և սովորողների հոգեբանական կարիքները հասցեագրելու առումով: Այս համատեքստում կարևոր է արձանագրել, որ հոգեբանների առկայությունը կախված չէ դպրոցի ներառական ծրագրի իրականացումից, այն կրում է և պետք է կրի համընդհանուր բնույթ, քանի որ հարցը

---

[27] ՀՀ ԿԳՄՍՆ, հոդված, 7 ապրիլի, 2025թ., *«Աշխատաժողով՝ «Ապահով դպրոց. կրթություն առանց բուլինգի»»*, https://escs.am/am/news/28427

վերաբերում է ուսուցիչների և աշակերտների միջանձնային հարաբերություններին և գործելակերպին։

## 2. Դպրոցական կրթության համար անհրաժեշտ գույքային և շենքային ենթակառուցվածք

*«Յուրաքանչյուր երեխա տաղանդավոր է, բայց որպեսզի նրա տաղանդը բացահայտվի, նա պիտի հասանելիություն ունենա կրթությանը։ Անհրաժեշտ են հետևյալ բաղադրիչները՝ պատշաճ շենքային և գույքային պայմաններ, կրթական ծրագիր և որակյալ մանկավարժական կազմ։ Այս բաղադրիչներից որևէ մեկի բացակայությունն անարդյունավետ է դարձնում կրթությունը»*[28]։ Այս մասին 2022 թվականին կրթության և գիտության օրվա առթիվ իր ուղերձում նշեց ՀՀ վարչապետը։

Նախորդ ենթագլխում քննարկվել են դասասենյակների կահավորվածության և դրանց բացակայության հիմնախնդիրները։ Այս բաժնում փորձ է իրականացվելու ուսումնական միջավայրի բարելավման առանձնահատկությունները առավել մանրամասն ներկայացնելու՝ հաշվի առնելով երեխայի զարգացման պահանջները։

Խնդիրների դիտարկման տեսանկյունից՝ այստեղ մենք ականատես ենք լինում ևս երեք կարևորագույն խնդրի, այն է՝ գույքային և շենքային պայմաններ, կրթական ծրագիր և որակյալ մանկավարժական կազմ։ Կրթական ծրագրերի մշակման և իրականացման և որակյալ մանկավարժական կազմի ձևավորման մասին, թեկուզ հպանցիկ և մակերեսորեն, բազմիցս խոսվել է վերոնշյալում, մինչդեռ գույքային և շենքային պայմանների խնդրին անդրադարձ չի եղել։ Երեխայի բազմակողմանի զարգացման և գործունեություն ծավալելու դիտակետից՝ անհամեմատ կարևոր է

[28] JAMnews, հոդված, 1 սեպտեմբերի, 2022թ., *««Յուրաքանչյուր երեխա տաղանդավոր է, բայց կրթությունը պիտի հասանելի լինի»․ Գիտելիքի օրը ՀՀ-ում»,* https://jam-news.net/am/%d5%b5%d5%b8%d6%82%d6%80%d5%a1%d6%84%d5%a1%d5%b6%d5%b9%d5%b5%d5%b8%d6%82%d6%80-%d5%a5%d6%80%d5%a5%d5%ad%d5%a1-%d5%bf%d5%a1%d5%b2%d5%a1%d5%b6%d5%a4%d5%a1%d5%be%d5%b8%d6%80-%d5%a7-%d5%a2%d5%a1/

գույքային և շենքային բարվոք պայմանների առկայությունը։

Պարզապես նշենք, որ այս համատեքստում ընդունվել են մի շարք որոշումներ, համաձայն այդ որոշումների՝ հատկացվել են ֆինանսական միջոցներ նախակրթարանների, հիմնական և միջնակարգ մի շարք դպրոցներ որակյալ գույքով ապահովելու, ինչպես նաև շենքային պայմանները բարելավելու նպատակով[29]։

Դպրոցի գույքային և շենքային պայմաններն առանցքային նշանակություն ունեն երեխայի լիարժեք զարգացման և ուսումնական գործընթացի արդյունավետության համար։ Երեխայի տեսանկյունից՝ բարվոք և հարմարավետ միջավայրն ուղղակիորեն ազդում է նրա հոգեբանական վիճակի վրա։ Լուսավոր, մաքուր և գեղագիտական առումով գրավիչ դասասենյակները, էրգոնոմիկ կահույքը և ժամանակակից սարքավորումները նպաստում են դրական տրամադրության, ինքնավստահության և ուսման հանդեպ հետաքրքրության բարձրացմանը։

Բացի այդ, անվտանգ և սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխանող պայմաններն ապահովում են երեխայի առողջությունը և կանխարգելում են հնարավոր վտանգները, ինչը թույլ է տալիս նրան կենտրոնանալ ուսումնական նյութի վրա։

Բացի հոգեբանական և ֆիզիկական անվտանգությունից, դպրոցի գույքային և շենքային պայմանները կարևոր են նաև կրթության որակի բարձրացման համար։ Ժամանակակից ուսումնական միջոցներով հագեցած լաբորատորիաները (հիմնականում բնագիտամաթեմատիկական առարկաներից), արհեստանոցները, գրադարանները, սպորտային դահլիճները և արվեստի սենյակները հնարավորություն են տալիս իրականացնելու ուսուցման բազմազան և ինտերակտիվ մեթոդներ։ Այսպիսի միջավայրը խթանում է երեխաների ճանաչողական և ստեղծագործական կարողությունները, զարգացնում է համագործակցության հմտություններ և նրանց նախապատրաստում է ժամանակակից աշխարհի պահանջներին։ Լուծելով գույքային ապահովման և շենքային պայմանների բարելավման հարցը՝ կարող ենք արձանագրել,

---

[29] ՀՀ ԿԳՄՍՆ, հոդված, 1 օգոստոսի, 2023թ., *«Մի շարք դպրոցների շենքային պայմաններ կբարելավվեն և կապահովվեն գույքով»*, https://escs.am/am/news/17582

որ տեսական գիտելիքներից զատ, հնարավորություն ենք ընձեռում աշակերտներին՝ գործնականում ծանոթանալու իրենց մասնագիտությանն առնչվող գործիքներին և նյութերին, այդ կերպ խրախուսելով պրակտիկ գիտելիքը։

Այսպիսով, դպրոցական ենթակառուցվածքի, մասնավորապես՝ գույքային և շենքային պայմանների բարելավումը ոչ միայն անհրաժեշտություն է, այլև անառարկալիորեն ներդրում է ապագա սերնդի կրթության և զարգացման գործում։

## 2.4 Տեսական և գործնական ասպեկտների համադրությունը՝ որպես զարգացման հիմք

Հետազոտական աշխատանքի երկրորդ՝ «Կրթության կարևորությունը և հասանելիության հիմնախնդիրները ժամանակակից աշխարհում և Հայաստանում» թեմայով գլխում վերլուծվեց կրթության կարևորագույն և առանցքային դերն անհատի և հասարակության զարգացման գործում, ինչպես նաև քննարկեց դրա հասանելիության հետ կապված հիմնախնդիրները և՛ ամբողջ աշխարհում, և՛ Հայաստանում։

Հաշվի առնելով վերոնշյալը՝ արձանագրենք, որ սույն գլխում մեծ ուշադրություն է դարձվել ֆիզիկական միջավայրի՝ դպրոցի շենքային և գույքային պայմանների, և հոգեբանական աջակցության՝ դպրոցական հոգեբանների ծառայությունների ներդրման համակցված ազդեցությանը։ Բացի այդ, համաշխարհային համատեքստում քննարկվել են կրթության հիմնախնդիրները՝ կապված ուսումնական ծրագրերի, ուսուցչական անձնակազմի, ինչպես նաև կրթության արդյունավետության վրա հակամարտությունների ունեցած ազդեցության հետ։

Հիմնախնդիրների հասցեագրումը և դրանց լուծման տարբերակների մշակումը կենսական նշանակություն ունեն, քանի որ, անշուշտ, բացի վերոնշյալից, կան նաև այլ բազմատեսակ խնդիրներ, սակայն հենց այս հիմնախնդիրներին անդրադառնալն է, որ ուսումնառությունը դարձնում է ավելի արդյունավետ և համապարփակ։

Այսպիսով, աշխատանքի տեսական մասը, որի շրջանակներում հստակեցվեցին գլխավոր հասկացությունները և բացահայտվեցին կրթական ոլորտի հիմնական մարտահրավերները, ամուր հիմք է ստեղծում գործնական քայլերի համար: Հետազոտական աշխատանքի հաջորդ գլխում կանդրադառնանք գործնական ասպեկտին՝ ներկայացնելով «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի ձեռք բերած փորձն ու իրականացվող հեղինակային կրթական ծրագիրը:

Վերջում նշենք՝ այս վերլուծությունը ցույց է տալիս, որ հեղինակային կրթական ծրագիրը կամ ընդհանրապես կրթական ռազմավարությունը կիրթ, գրագետ, պատասխանատու և զարգացած անհատի և հասարակության ձևավորման տեսանկյունից, ոչ միայն օրենսդրական և տեսական դրույթների ամբողջություն է, այլև գործնական քայլերի ու կոնկրետ գործողությունների արդյունք:

# Գլուխ 3.
# Հեղինակային կրթական ծրագիրը «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում և հետազոտական վարժարանում

*«Դպրոցը պետք է հիմնված լինի ընկերության վրա՝ ուսուցչի ու սովորողի, ինչպես այն բլեյան դպրոցում է: Դա համակեցություն է, միասին ապրել, ու պետք է լինի ուրախ, առանց վախերի: Համակեցության մեջ և՛ սովորողներն են, և՛ ուսուցիչները, և՛ պատվիրատուն՝ ծնողը, հասարակությունը: Դպրոցը չի կարող չլինել համակեցություն, քանի որ հանրակրթության բուն բովանդակությունն այդ համակեցության կազմակերպումն է»[30]:*

**Աշոտ Բլեյան,**
**«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի հիմնադիր-տնօրեն**

Ինչպես նշված է «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի կանոնադրության մեջ՝ կրթահամալիրը «փորձարարական-հետազոտական, նախադպրոցական, հանրակրթական հեղինակային, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական փորձնական, նախասիրական, լրացուցիչ (այդ թվում՝ արտադպրոցական) կրթական ծրագրեր իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություն է»:

Հիմք ընդունելով կանոնադրության առաջին կետը (մեջբերված է վերևում)՝ առաջարկում ենք ծանոթանալ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի կողմից իրականացվող հեղինակային կրթական ծրագրի բաղադրիչներին՝ առանձին-առանձին՝ դրանց յուրահատկություններով և ընձեռվող հնարավորություններով:

---

[30] Աշոտ Բլեյան, հոդված, 2 հուլիսի, 2024թ., *«Դպրոցը պետք է հիմնված լինի ուսուցչի ու սովորողի ընկերության վրա…»*, https://ashotbleyan.am/archives/78565

Փորձ կարվի պատասխանելու երկրորդ գլխում արծարծված ուսումնառությանն ու կրթական միջավայրին առնչվող հիմնախնդիրներին՝ ներկայացնելով հեղինակային կրթական ծրագրի կիրառման միջոցով ձևավորված արդյունավետ լուծումները։

Արձանագրենք, որ հաշվի առնելով հեղինակային կրթական ծրագրի ծավալուն բնույթը և դրա բազմաշերտ առանձնահատկությունները, նպատակահարմար է կենտրոնանալ դրա հիմնական առավելությունների վրա։ Դրանք առավել հստակ ցույց են տալիս կրթական համակարգի արդյունավետության և կիրառելիության հիմնական ուղղությունները։

## 1. Կրթահամալիրի կառավարման մոդելը՝ համագործակցության որակյալ մեթոդ

Ցանկացած կրթական հաստատության համար ճիշտ կառավարումը և ռեսուրսների արդյունավետ բաշխումը կենսական նշանակություն ունեն՝ ծրագրերն ու նախաձեռնությունները կյանքի կոչելու, ռեսուրսներն արդյունավետ կերպով օգտագործելու տեսանկյունից։ Կառավարման ճիշտ կամ ընդունելի մոդելներն ապահովում են ռեսուրսների (ֆինանսական, մարդկային, նյութական) շահավետ օգտագործումը, կառուցվածքային միավորների գործընթացների հստակ կազմակերպումը և որոշումների կայացման թափանցիկությունը։

Տարրականից մինչև մասնագիտական, այս համատեքստում՝ ավագ դպրոց և հիմնական կրթություն՝ կառավարման ճիշտ մոտեցումները թույլ են տալիս ստեղծել կայուն և զարգացող համակարգ, որը կարող է արձագանքել ժամանակի մարտահրավերներին և ապահովել որակյալ կրթություն կրթահամալիրի բոլոր սովորողների համար։ Հաշվի առնելով կրթահամալիրի առանձնահատկությունները՝ ստորև ներկայացվում է նրա կառուցվածքը՝ կառավարման մարմինների շեշտադրմամբ։

Պատկերացնելու համար, թե ինչքան բարդ և համակարգված աշխատանք է պահանջում կրթահամալիրի կառավարումը, նշենք, որ կրթահամալիրը բաղկացած է **7 մասնաճյուղ-ուսումնական հաստատություններից**, որոնցից յուրաքանչյուրն ունի իր տնօրենը (ի պաշտոնե՝ ծրագրի ղեկավար)։

Ահա մասնաճյուղերի ցանկը.

1. Արևելյան դպրոց-պարտեզ (539 սովորող) – ընդհանուր՝ 22 դասարան
2. Արևմտյան դպրոց-պարտեզ (511 սովորող) - ընդհանուր՝ 20 դասարան
3. Հյուսիսային դպրոց-պարտեզ (404 սովորող) - ընդհանուր՝ 18 դասարան
4. Հարավային դպրոց-պարտեզ (393 սովորող) - ընդհանուր՝ 17 դասարան
5. Միջին դպրոց (803 սովորող) - ընդհանուր՝ 33 դասարան
6. Ավագ դպրոց (644 սովորող) - ընդհանուր՝ 16 դասարան
7. Քոլեջ (544 սովորող)

*Բոլոր մասնաճյուղերի դասարանների քանակը միասին կազմում է 126* [31]*։*

**Բոլոր մասնաճյուղ-ուսումնական հաստատությունները միասին հեղինակային կրթական ծրագրով ուսումնառություն են ապահովում շուրջ 3840 սովորողի համար**[32]**։**

Համաձայն «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի կանոնադրության IV գլխի (Կրթահամալիրի կառավարումը) 36-րդ կետի՝ «կրթահամալիրի կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նախարարությունը, կրթահամալիրի կառավարման կոլեգիալ մարմինը՝ կրթահամալիրի խորհուրդը, կրթահամալիրի գործադիր մարմինը՝ գործադիր տնօրենն ու իր աշխատակազմը։

[31] «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի գրասենյակ, Լ. Ազիզխանյան, հոդված, 1 սեպտեմբերի, 2025թ. *«Վարչական խորհրդի նիստ»* (ներկայացված՝ 02.09.2025-ի նիստի), կետ՝ *«2025-2026 ուստարվա կոմպլեկտավորումը սեպտեմբերի 1-ի դրությամբ»*, https://officemskh.wordpress.com/2025/09/01/%d5%be%d5%a1%d6%80%d5%b9%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d5%ad%d5%b8%d6%80%d5%b0%d6%80%d5%a4%d5%ab-%d5%b6%d5%ab%d5%bd%d5%bf-74/

[32] Համաձայն կոլեգիալ կառավարման խորհրդին ս.թ. մարտի 20-ին ներկայացված *«Կրթահամալիրի սովորողների մասին տեղեկանքի»*, https://mskh-my.sharepoint.com/:x:/g/personal/lilit_mskh_am/EY2O_3aNnE9MkDnIN05UoX0Bv6sE4-rOLkLmoDzlZcW_xg?e=bqV4Lb

Սույն թվականի մարտի 20-ին կառավարման խորհուրդը հերթական նիստում հաստատեց կրթահամալիրի կառուցվածքը, ըստ որի կառավարման մարմիններ են.

1. Կոլեգիալ կառավարման խորհուրդ[33]
2. Տնօրեն
    1. Տնօրենի աշխատակազմ
    2. Վարչական խորհուրդ
3. Կրթահամալիրի հիմնադիր-տնօրեն
4. Մասնաժողով
    1. Մանկավարժության կենտրոն
    2. Մանկավարժության լաբորատորիա
    3. «Տիգրան Հայրապետյան» գրադարան
    4. Մասնախմբեր

Անդրադառնալով առաջին կետին՝ կոլեգիալ կառավարման խորհրդին, հարկ է նշել, որ խորհրդի կազմում, համաձայն կանոնադրության, ընդգրկվում են երեք անդամներ, որոնք նշանակվում են ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից, իսկ մնացյալը (12 հոգի) ընտրվում են իրենց համայնքներում և խորհուրդներում անցկացված թափանցիկ ընտրությունների արդյունքում։ Սա վերստին ցույց է տալիս, որ խորհուրդը՝ կրթահամալիրի կառավարման վերին օղակը, բաղկացած չէ միայն մանկավարժներից, այլ ընդհակառակը՝ մի հարկի տակ է հավաքում և՛ լիազոր ներկայացուցչի՝ նախարարության, և՛ ծնողական, և՛ մանկավարժական, և՛ աշակերտական-ուսանողական համայնքների ներկայացուցիչների։ Կարևոր է շեշտադրել, որ ելնելով

---

[33] Համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» մարտի 12-ի հրամանի, https://mskhboard.wordpress.com/wp-content/uploads/2025/03/d5b0d680d5a1d5b4d5a1d5b6.docx

ժողովրդավարական սկզբունքներից, ընտրությունները յուրաքանչյուր համայնքում կազմակերպվում են թափանցիկ, և որևէ խտրականություն կամ արհեստական սահմանափակում չի դրվում՝ բացառությամբ նախարարության հրամանների և կրթահամալիրի կանոնադրության պահանջների։ Ներքոհիշյալում կցուցադրվեն համայնքային ներգրավվածությունը հավաստող փաստեր։

1. Կրթահամալիրի ծնողական խորհուրդների քվեարկությանը մասնակցել է 1604 ծնող։
2. Մանկավարժական համայնքի ներկայացուցիչների քվեարկությանը մասնակցել է կրթահամալիրի 413 աշխատող։
3. Քոլեջի ուսանողական խորհրդից քվեարկությանը մասնակցել է 369 ուսանող։
4. Ավագ դպրոցի սովորողներից քվեարկությանը մասնակցել է 372 սովորող[34]։

Կրթահամալիրի կանոնադրությամբ սահմանված կարգով՝ կառավարման խորհուրդն օժտված է գործադիր մարմնի ընտրության և նշանակման իրավասությամբ։ 2026 թվականի փետրվարի 4-ին կայացած արտահերթ նիստի օրակարգում ներառված էր կրթահամալիրի տնօրենի ընտրության հարցը՝ նախկին տնօրենի լիազորությունների դադարեցմանը հաջորդած անցումային շրջանի ավարտին։ Գործընթացն իրականացվեց հրապարակայնության և թափանցիկության սկզբունքների լիարժեք պահպանմամբ, որի արդյունքում կառավարման խորհուրդը հաստատեց կրթահամալիրի նոր տնօրենի ընտրությունը՝ դրանով իսկ ապահովելով հաստատության հետագա զարգացման և կրթական ծրագրերի շարունակականության նոր փուլը[35]։ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի տնօրեն ընտրվեց Լուսինե Փաշայանը։

---

[34] «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի կառավարման խորհուրդ, հոդված, 14 փետրվարի 2025թ., Լ. Ազիզխանյան, *«Կառավարման խորհրդի կազմի ընտրությունների արդյունքներ»*, https://mskhboard.wordpress.com/2025/02/14/%D5%AF%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%AD%D5%B8%D6%80%D5%B0%D6%80%D5%A4%D5%AB-%D5%AF%D5%A1%D5%A6%D5%B4%D5%AB-%D5%A8%D5%B6%D5%BF%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82/

[35] Կառավարման խորհուրդ, հոդված, 4 փետրվարի, 2026թ., *«Արձանագրություն-02 (04.02.2026թ.)»*, https://mskhboard.wordpress.com/2026/02/04/3746/

Հասարակություն-կրթահամալիր (առավել կոնկրետ՝ շահառու-դպրոց) հարաբերությունները նոր մակարդակ հասցնելու, երկխոսությունն ավելի ուղղակի, դյուրին և թափանցիկ դարձնելու, փոխվստահությունն ամրապնդելու նպատակով, կառավարման խորհուրդը մի շարք հարցերում դիմում է ծնողական համայնքին՝ աջակցության համար։ Նման հաջող փորձ արձանագրվեց 2025 թվականի հոկտեմբերին, երբ կառավարման խորհուրդը, քննարկելու համար կրթահամալիրի զարգացման խնդիրներն ու շուտափույթ լուծում պահանջող հիմնահարցերը, հրավիրեց ծնողական համայնքի հանդիպում-ժողով, որի ընթացքում ծնողների կողմից հնչեցվեցին կարծիքներ, դիրքորոշումներ, խնդիրների լուծման հնարավոր տարբերակներ[36]։ Ծնողների ներգրավումը նմանատիպ քննարկումներում առանցքային է, քանի որ բարձրացված հարցերն անմիջականորեն առնչվում են իրենց երեխաների կրթական միջավայրին։

Խոսելով կառավարման մարմիններից՝ պետք է անպայմանորեն նշել նաև մասնաժողովի և նրան առընթեր մասնախմբերի գործառույթներն ու կարևորությունը կրթահամալիրի ղեկավարման գործում։ Համաձայն աշխատակարգի՝ մասնաժողովը կրթահամալիրի մանկավարժական, ուսումնամեթոդական, հետազոտական գործունեությունը պլանավորող, համակարգող և կարգավորող կոլեգիալ մարմին է։ Կրթահամալիրի մասնախմբերի, ուսումնական կենտրոնների ղեկավարները ձևավորում են կրթահամալիրի մասնաժողովը, որը կրթահամալիրի կանոնադրությամբ որոշված մարմին է։

2024-25 ուսումնական տարվա համար առանձնացվել են հետևյալ մասնախմբերը[37], որոնք գործունեություն են ծավալում տարբեր բնագավառներում՝ արհեստագործականից մինչև հումանիտար, բնագիտականից մինչև մարզական՝

---

[36] Հետազոտական վարժարան, հոդված, 9 հոկտեմբերի, 2025թ., *«Հանդիպում կրթական համայնքում»*, https://mskh.am/posts/post/_id/68e7f93dca1a37ec2349366a

[37] Մանկավարժության կենտրոն, հոդված, 2024թ., *«Մասնագիտական խմբեր»*, https://pedagogicalclubmskh.wordpress.com/%d5%b4%d5%a1%d5%bd%d5%b6%d5%a1%d5%a3%d5%ab%d5%bf%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d5%ad%d5%b4%d5%a2%d5%a5%d6%80/

ապահովելով բազմազան և բազմատեսակ ուսումնառության ծրագրերի մշակում, կատարելագործում, իրացում:

1. Դաստիարակներ,
2. Դասվարներ,
3. Մայրենի դասավանդողներ,
4. Մաթեմատիկա դասավանդողներ,
5. Եվրոպական և տարածաշրջանային օտար լեզուներ դասավանդողներ,
6. Ռուսերեն դասավանդողներ,
7. Պատմություն, հասարակագիտություն դասավանդողներ,
8. Բնագիտություն դասավանդողներ,
9. Հայրենագիտություն, էկոլոգիա դասավանդողներ,
10. Երգի, պարի, ծեսի կազմակերպիչներ,
11. Կերպարվեստ, տեխնոլոգիա դասավանդողներ,
12. «Միջավայրի խնամք և բարեկարգում», «Պարտեզի խնամք» դասավանդողներ, պարտեզապուրակային գործունեության նախագծերի ղեկավարներ,
13. Առողջ խոհանոց. խոհարարական, առողջագիտության դասընթացներ վարողների, ուսումնական նախանգծերի ղեկավարների, առողջագետների, խոհարարների մասնախումբ,
14. Մարզիչներ:

Ինչպես երևում է վերևում՝ կառավարման մարմինները, ի հակադրություն հանրության թերի պատկերացումների, կարծրատիպերի և ակնկալիքների, ներդաշնակ համակարգ են ներկայացնում, որի գործառույթներն ու աշխատակարգերը սահմանված են կանոնադրությամբ և մեծաթիվ այլ օրենսդրական ակտերով, և որի մարմինները հանուն համընդհանուր շահի՝ հեղինակային կրթական ծրագրի զարգացման և ապագա լիիրավ, հմուտ, արհեստավարժ ու գիտակից քաղաքացիների կերտման համար համագործակցում և փոխգործակցում են միմյանց հետ, որոշակի

դեպքերում նաև՝ փոխլրացնում միմյանց՝ կազմակերպելով նիստեր, հանդիպումներ ոլորտի մասնագետների հետ, ընդունելով առանցքային որոշումներ, նախաձեռնելով ծրագրեր և այլն։

## 2. Ազատ ընտրությունը և կամքի դրսևորումը՝ հեղինակային կրթական ծրագրի անբաժան բաղադրիչ

Յուրաքանչյուր ուսումնական հաստատություն ինքն է որոշում, թե ինչպիսի նորարարություններ պետք է մտցնի իր ուսումնառության գործընթացում այն ավելի դյուրին, հետաքրքիր, բազմազան և անշուշտ, որակյալ դարձնելու՝ հիմնվելով որդեգրած արժեքների ու սկզբունքների և հաշվի առնելով իրավական-օրենսդրական ակտերն ու կրթական ծրագրերը (լինեն դրանք պետական այլընտրանքային, հեղինակային կրթական, թե միջազգային նշանակության)։ Կրթահամալիրի շուրջ երեք տասնամյակի գործունեության կարևորագույն մասերից է եղել այն, որ ամեն սովորող ինքն է տնօրինել և կազմել իր ուսումնական պլանը՝ շեշտը դնելով սեփական նախասիրությունների և հետաքրքրությունների վրա։ Ուսումնական պլանը կազմելու պրոցեսը բազմակիորեն հեշտացվել է վերջին տարիներին՝ ընձեռելով սովորողներին նոր հնարավորություններ ինքնարտահայտվելու, մասնագիտական գիտելիքներ ձեռք բերելու և դրանց զարգացմանը նպաստելու։

Այստեղ էական է նշել նաև ուսումնառության պայմանագրի կնքման գործընթացը, որն ի տարբերություն այլ պետական կրթական հաստատությունների, եռակողմ է, այսինքն՝ դպրոցի ղեկավարության և լիազոր ներկայացուցչի, դիցուք՝ ծնողի կողքին հայտնվում է ևս մի կողմ, որն ունի կանոնադրությամբ և պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները։ Սա վկայում է այն մասին, որ սովորողն է ուսումնական գործընթացի կերտողն ու մշակողը, և միայն ինքն իր

կամքով կարող է որոշել իր ուսումնառության պայմանները՝ հարգելով իրեն վերապահված իրավունքները և ենթարկվելով օրենքներին:

### 1. Սովորողի անհատական պլանը

Երբ խոսքը վերաբերում է կրթահամալիրում սովորողի ուսումնառության եռակողմ պայմանագրին, որը հիմնված է նրա կամքի ազատ արտահայտման վրա, կարևոր է նշել, որ յուրաքանչյուր սովորող ինքն է մշակում իր անհատական ուսումնական պլանը: Անհատական պլանը սովորողի ուսումնառության պայմանագրի հավելվածն է: Այս պլանը կազմվում է ուսումնական չորս շրջանի համար՝ սեպտեմբեր-դեկտեմբեր, հունվար, փետրվար-մայիս և հունիս*, որոնց ընթացքում համադրվում են դպրոցի ուսումնական պլանն ու կրթահամալիրի օրացույցը: Սովորողը կարող է իր անհատական պլանը կազմել ինքնուրույն կամ իր ընտրած խորհրդատուի հետ, որն այնուհետև համաձայնեցվում է ծնողի հետ: Պլանը հաստատում է դպրոցի ղեկավարը:

Ավելի ճշգրիտ պատկերացում կազմելու համար, հարկ ենք համարում վկայակոչել UNICEF կազմակերպության բացատրությունն անհատական ուսումնական պլանի վերաբերյալ.

*«Անհատական ուսուցման պլանը (ԱՈւՊ) սովորողի կարիքների, ուժեղ կողմերի ու հետաքրքրությունների և հանրակրթության պետական չափորոշիչների ու ծրագրերի հիման վրա մշակված փաստաթուղթ է: Այն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի կրթության կազմակերպման հիմքը և մշակվում է մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից, որի կազմում ներառվում են սովորողին դասավանդող ուսուցիչները, ուսուցչի օգնականները, աջակցության ծառայություններ մատուցող մասնագետները, սովորողը և նրա ծնողը*

*(օրինական ներկայացուցիչը)»*[38]:

Ստորև ներկայացվում է ուսումնական պլանի կառուցվածքը, որը սահմանել է կրթահամալիրի Մանկավարժության կենտրոնը[39].

- հանրակրթություն. որոշվում է հեղինակային կրթական ծրագրի օրինակելի ուսումնական պլանով,
- դպրոցական բաղկացուցիչ. հեղինակային կրթական ծրագրի ուսումնական պլանում առաջարկվող ցանկից՝ սովորողի ընտրությամբ դասընթացներ, ակումբներ, ուսումնական երկարաժամկետ նախագծեր,
- ինքնակրթություն, տնային ուսումնական աշխատանք (ընտրած դասընթացի, նախագծի, լրացուցիչ կրթության աշխատանք),
- ուսումնական պլանով որոշված համադպրոցական (ընդհանուր) պարապմունքները, ինքնասպասարկման, շրջապատի, նյութական միջավայրի բարելավման, ուսումնական-հասարակական (քաղաքացիական կրթության) նախագծերը,

---

[38] UNICEF Հայաստան, զեկույց, 2022թ., *«Անհատական ուսուցման պլան՝ ուղղված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին»*, https://www.unicef.org/armenia/%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81%D5%B6%D5%A5%D6%80/%D5%A1%D5%B6%D5%B0%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%BA%D5%AC%D5%A1%D5%B6%D5%9D-%D5%B8%D6%82%D5%B2%D5%B2%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%BC%D5%A1%D5%B6%D5%B1%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%AF-%D5%BA%D5%A1%D5%B5%D5%B4%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%AF%D5%A1%D6%80%D5%AB%D6%84-%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D6%81%D5%B8%D5%B2

* Հունվար և հունիս ամիսներին կրթահամալիրի բոլոր մասնաճյուղերում կազմակերպվում են ուսումնական ճամբարներ՝ համապատասխանաբար ձմեռային և ամառային, որի ընթացքում սովորողները ճամփորդում են, այցելություններ ունենում, իրենց հանգիստը վայելում:

[39] Մանկավարժության կենտրոն, Ս. Մարկոսյան, 20 օգոստոսի, 2022թ., *«Սովորողի անհատական ուսումնական պլանի կազմման կարգ»*, https://pedagogicalclubmskh.wordpress.com/2020/08/20/%D5%BD%D5%B8%D5%BE%D5%B8%D6%80%D5%B8%D5%B2%D5%AB-%D5%A1%D5%B6%D5%B0%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%BA%D5%AC%D5%A1%D5%B6/

➢ լրացուցիչ կրթություն դպրոցում, կրթահամալիրի ուսումնական կենտրոնում կամ այլ հաստատությունում. այդ թվում՝ շտկողական աշխատանք, երկարացված օրվա ծրագիր:

Կարևոր է արձանագրել, որ կրթահամալիրում կամ այլ հաստատությունում լրացուցիչ կրթություն ընտրած սովորողը դպրոցի ղեկավարի համաձայնությամբ կարող է ազատվել ուսումնական պլանով նախատեսված ընտրությամբ դասընթացներից: Դրա հիմնավորումը լրացուցիչ կրթությունից ունեցած առաջընթացն է, սովորողի մասնագիտական կողմնորոշումը: Սովորողը լրացուցիչ կրթության արդյունքները պարբերաբար ներկայացնում է կրթահամալիրում՝ անհատական-խմբային համերգի, ներկայացման, ցուցահանդեսի, իր ընտրած բնագավառի ամենամյա ստուգատեսի միջոցով:

## 2. Սովորողին առաջարկվող ընտրությամբ խմբերը

Կրթահամալիրի կանոնադրության և զարգացման ծրագրերի գաղափարական ու ռազմավարական հիմքերին համահունչ՝ իրականացվում է կրթական ծրագիր, որի առանցքում դրված է սովորողի և դասավանդողի փոխադարձ համագործակցությունը և սերտ մասնագիտական փոխազդեցությունը: Ի տարբերություն բազմաթիվ այլ ուսումնական հաստատությունների՝ դպրոցը նպատակ չի հետապնդում ստեղծել ծայրահեղ բևեռացված (հիերարխիկ) մոտեցումներ, այլ ձգտում է համադրել և հավասարակշռել դրանք՝ ուղղված սովորողի գիտական, մտավոր և անձնային առաջընթացի և ինքնիրացման ապահովմանը: «Ընտրությամբ գործունեության խմբերը» որոշներին թվում են անսովոր, մինչդեռ կրթահամալիրն ունի խմբերի լայն ընտրություն: Հանրակրթական առարկաների դասավանդումից զատ, կրթահամալիրում կան մի շարք «խմբեր», որոնք ձևավորվում են ընդհանուր նախասիրություններ և հետաքրքրություններ ունեցող սովորողների կողմից: Կրթահամալիրում գործում են բազմատեսակ խմբեր, ինչպես օրինակ՝ օտար լեզուների

դասավանդման, արհեստագործական, արվեստի, հումանիտար և բնագիտամաթեմատիկական գիտությունների և սպորտային։ Պայմանագրով սահմանված կարգով՝ յուրաքանչյուր սովորող ուսումնական տարվա սկզբին ընտրում է իր նախասիրած ընտրությամբ խումբը, և իրավունք ունի հաջորդ ուսումնական շրջանի ընթացքում (հատկապես 3-րդ) փոխել այն։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դպրոցում ուսուցումը կազմակերպվում է թե՛ առկա, և թե՛ հեռավար՝ որոշ խմբեր ընձեռում են նաև հեռակա կերպով աշխատելու և ուսանելու հնարավորությունը։

**Հետազոտական վարժարանի սովորողները որպես ընտրությամբ դասընթաց հնարավորություն ունեն ընտրելու ներքոհիշյալ առարկաները.**

**Ֆիզկուլտուրա (սպորտաձև)՝**

| | | | |
|---|---|---|---|
| Սուսերամարտ | Հրաձգություն | Վոլեյբոլ | Բասկետբոլ |
| Սեղանի թենիս | Ֆուտբոլ | Մարմնամարզություն | Հեծանվավարություն |

**Օտար լեզուներ՝**

| | | | |
|---|---|---|---|
| Հայոց լ. Քերականություն | Իսպաներեն | Ֆրանսերեն | Իտալերեն |
| Վրացերեն | Պարսկերեն | Թուրքերեն | Ռուսերեն |

Արձանագրենք, որ կրթահամալիրում դասավանդվում են նաև տարածաշրջանային լեզուներ, ինչը խթանում է միջմշակութային և միջհասարակական կապերը, թույլ է տալիս խորապես ուսումնասիրելու և ճանաչել հարևան պետությունների ծագումնաբանությունը, մշակույթը, պատմությունը, ինչպես նաև բացահայտելու դրանց ունեցած ընդհանրությունները հայ ժողովրդի և հայերենի հետ։ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի պաշտոնական կայքում բոլոր վերոնշյալ լեզուներով հրապարակվող նյութերն ու հոդվածներն ապահովում են

կրթահամալիրի գործունեության բազմալեզու ներկայացվածություն և նպաստում են դրա հասանելիությանն ու ճանաչելիությանն ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջազգային հարթակներում:

**Բնագիտական առարկաներ՝**

| | | | |
|---|---|---|---|
| Աշխարհագրություն | Ֆիզիկա | Քիմիա | Կենսաբանություն |

**Հումանիտար առարկաներ՝**

| | |
|---|---|
| Հայոց պատմություն | Համաշխարհային պատմություն |

**Արվեստ՝**

| | | |
|---|---|---|
| Գծանկար | Գունանկար | Կարուձև |
| Դերասանի վարպետություն և բեմական խոսք | Ճարտարապետություն և նախագծում | Լուսանկարչական գործ |

**Արհեստ՝**

| | | |
|---|---|---|
| Ոսկերչություն | Ծրագրավորում | Ինժեներատեխնիկական աշխատանքներ |
| Գործիքաշինություն | Անօդաչու սարքերի պատրաստում և սպասարկում | Քանդակագործություն/ բրուտագործություն |

**Միջազգային քննությունների նախապատրաստման դասընթացներ (ավարտական դասարանների սովորողների համար)՝**

| | |
|---|---|
| TOEFL անգլերեն | SAT մաթեմատիկա |

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ Ավագ դպրոց-հետազոտական վարժարանի սովորողն ունի ընտրության լայն հնարավորություն՝ բնագիտական առարկաներից մինչև հումանիտար, սպորտաձևերից մինչև օտար լեզուներ: Սա վերստին շեշտադրում է կրթահամալիրի հանձնառությունը՝ նպաստելու սովորողի բազմակողմանի զարգացմանը, ինչն իրականություն է դառնում նաև բարձր որակավորում ունեցող մանկավարժների և արհեստավարժ մասնագետ-ուսուցիչների ներգրավվածության շնորհիվ:

Կարևոր է ընդգծել նաև, որ որևէ առարկայի բացակայության պարագայում սովորողներն իրենք են հանդես գալիս նախաձեռնողականությամբ և մշակում նախագծեր՝ տարբեր բնագավառների խնդիրներ ուսումնասիրելու նպատակով:

## 3. Ակումբային գործունեություն

Կրթահամալիրում տարբեր ժամանակներում գործել են և շարունակում են գործել բազմազան ակումբներ, որոնք սովորողներին հնարավորություն են ընձեռում ներգրավվելու իրենց նախասիրությանը կամ ապագա մասնագիտությանն առնչվող գործունեության մեջ և գործնական միջավայրում ձևավորելու մասնագիտական կապեր:

| | | | | |
|---|---|---|---|---|
| «Զենիթ» բենդ | Էլեկտրոնային երաժշտություն | «Պատանեկան երգչախումբ» | «Հասկ» ազգային երգի ու պարի ակումբ | Հոգեբանի ակումբ |

## 4. Նախագծային աշխատանքներ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի մարտի 11-ի «Նախագծային ուսուցման հայեցակարգը և ուսուցիչների վերապատրաստման մոդուլը հաստատելու մասին» N 08-L հրամանի պաշտոնական

տեքստում (հետագայում խմբագրված) նախագծային աշխատանքը (կամ ուսումնական նախագիծը) սահմանվում է որպես «ուսումնառության գործընթացի մասնակիցների համար որոշակի տնական ժամանակահատվածում առանձնապես ինքնատիպ արժեք ստեղծելու գործընթաց», իսկ հանրակրթության ոլորտում՝ ուսուցման որոշակի նպատակի հասնելու համար մանրակրկիտ պլանավորված համագործակցային աշխատանք»[40]:

Հավատարիմ լինելով սեփական արժեքներին և ունենալով սովորողի բազմակողմանի զարգացման տեսլական և ձգտում՝ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի բոլոր մասնաճյուղերի սաները, կախված իրենց կարողունակություններից և ուսումնառության պահանջներից, տասնամյակներով մշակում և իրականացնում են տարաբնույթ նախագծային աշխատանքներ տարբեր բնագավառներից: Մի շարք նախագծեր արժանանում են խրախուսական մրցանակների և ներկայացվում են ներպետական և միջազգային համաժողովներում և աշխատարաններում: «Բլեյան կրթական բաց ցանցը» չի կենտրոնանում միայն ներկրթահամալիրյան ուսումնական միջավայրի մասնակիցների կարողությունների և ընդունակությունների զարգացման և ընդլայնման վրա, այլև ձգտում է հարստացնել իր կապերը հայաստանյան տարբեր ուսումնական հաստատությունների հետ՝ իրագործելով կրթական փոխանակումների ծրագրեր՝ այդ համատեքստում ներառելով իր կրթական, հետազոտական, գիտական միջավայրում նաև այլ դպրոցների սաների:

*«Սովորողի ընտրությամբ ուսումնական նախագիծը Ավագ դպրոցում կարող է փոխարինել տնային կոչվող պարտադիր աշխատանքին: Տնային ամենօրյա աշխատանքի փոխարեն սովորողն անհատական նախաձեռնությամբ, ցանկությամբ և առաջարկով կարող է իրականացնել ինքնակրթություն: Աշխատանքը կարող է ընդգրկել մեկ ամսից մինչև մեկ կիսամյակ: Սովորողի ընտրությամբ ուսումնական նախագծի բովանդակությունը կարող է ուղղված լինել ինչպես ուսումնական պլանով*

[40] ՀՀ ԿԳՄՍՆ, Նախարարի 2025թ. մարտի 25-ի թիվ 09-Լ հրաման, https://escs.am/files/files/2025-03-26/acf1d4c6858705108274022c46ca3a9d.pdf

*որոշված ընդհանուր բաղադրիչի դասընթացների, այնպես էլ սովորողի ընտրությամբ որևէ բնագավառի, այն է՝ կրթության, գիտության, տեխնիկայի, մշակույթի և այլ բնագավառներում կանոնավոր գիտելիքների ինքնուրույն ձեռք բերման*[41]», - նշում է հայոց լեզվի դասավանդող Նունե Մովսիսյանը։

Այս ենթագլխում առաջարկում ենք ծանոթանալ երկու կարևոր նախագծերին՝ «Սովորող-սովորեցնող» և «Նախասիրությունների բացահայտում», և անվանական մրցանակների շնորհման ընթացակարգերին։

## 1. «Սովորող-սովորեցնող» նախագիծ

Սույն նախագծի հիմնական նպատակներից են սովորող-սովորեցնող մեթոդի կիրառության արդյունավետության բարձրացումը, համագործակցային, հետազոտական, հաղորդակցության հմտությունների զարգացումը, միջանձնային հարաբերությունների ձևավորումը, անհատական հետաքրքրությունների և նախասիրությունների ներկայացումը, ինքնադրսևորումն ու ինքնաբացահայտումը։ Նմանատիպ նախագծերի շրջանակներում կրթահամալիրի տարատարիք սովորողները հանդես են գալիս հեղինակած նախաձեռնություններով և նախագծերով՝ իրենց հասակակիցներին կամ տարիքով առավել փոքրերին տարաբնույթ հմտություններ (ՏՏ, սպորտ, մշակույթ և այլն) սովորեցնելու նպատակով։ Կրթահամալիրի կրտսեր դպրոցներից միջին դպրոց տեղափոխված սովորողներն այս նախագիծը սիրով իրականացնում են իրենց նախորդ ուսումնական օղակում՝ կրտսեր ընկերներին նոր գիտելիքներ պարգևելով և սեփական փորձը հարստացնելով։

---

[41] Ն. Մովսիսյան, հոդված, 13 հուլիսի, 2022թ., *«Ավագ դպրոցում սովորողի ընտրությամբ ուսումնական նախագիծ իրականացնելու կարգ»*, https://nunemovsisyanblog.wordpress.com/2022/07/13/%D5%A1%D5%BE%D5%A1%D5%A3-%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81%D5%B8%D6%82%D5%B4-%D5%BD%D5%B8%D5%BE%D5%B8%D6%80%D5%B8%D5%B2%D5%AB-%D5%A8%D5%B6%D5%BF%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B4%D5%A2/

Ըստ էության՝ սովորողը հայտնվում է կենտրոնում՝ փոխանցելով իր փորձն ու կարողությունները և ձեռք բերելով անձնային աճ: Այս կերպ նա հնարավորություն է ստանում հայտնվելու սովորեցնողի դերում և դիտարկելու ուսումնական գործընթացը այլ տեսանկյունից[42]:

## 2. «Նախասիրությունների բացահայտում» նախագիծ

«Նախասիրությունների բացահայտում» նախագիծը մշակվել և իրականացվել է ավագ դպրոց-հետազոտական վարժարանում՝ նպատակ ունենալով բացահայտել սովորողների հոգեբանական առանձնահատկություններն ու նախասիրությունները, ինչպես նաև դյուրացնել ուսումնական պլանի կազմումը: Ավագ դպրոցում ցայսօր իրականացվել է բազմափուլ թեստավորում, որի ընթացքում հավաքագրվել են մի շարք կարևոր նշանակություն ունեցող տվյալներ, որոնք նպաստել են տնօրինության՝ սովորողների ու իրենց նախընտրությունների վերաբերյալ ճշգրիտ պատկերացման ձևավորմանը, և առավել հարմարավետ ու ցանկալի ուսումնական պլանի կառուցմանը: Կարևոր է արձանագրել, որ բազմիցս թեստավորվել են միևնույն սովորողները՝ տարբեր տարիների ընթացքում և տարբեր դասարանների տեղափոխվելիս՝ նախասիրությունների փոփոխությունները մշտադիտարկելու, վերլուծություններ կատարելու համար[43]:

Նախագիծը հիմնականում կազմված էր երեք առաջադրանքներից, որոնք ձևավորել էին եռափուլ թեստ: Առաջին թեստը, որը ներկայացնում էր հարցերի հավաքածու և կազմում էր ամբողջ նախագծի 95%-ը, բացահայտում էր, թե սովորողները որ առարկաներն են սիրում, որոնց մեջ կցանկանան խորանալ: Առաջին

---

[42] Ա. Աբրահամյան, հոդված, 28 սեպտեմբերի, 2024թ., *«Սովորող-սովորեցնող նախագծեր»*, https://armineab.wordpress.com/2024/09/28/%D5%BD%D5%B8%D5%BE%D5%B8%D6%80%D5%B8%D5%B2-%D5%BD%D5%B8%D5%BE%D5%B8%D6%80%D5%A5%D6%81%D5%B6%D5%B8%D5%B2-%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A3%D5%AE%D5%A5%D6%80/

[43] Ա. Տիգրանյան, հոդված, 26 դեկտեմբերի, 2014թ., *«Նախասիրությունների բացահայտում»*, https://tigranyanashot.wordpress.com/2014/12/26/%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A3%D5%AB%D5%AE-2/

թեստի համար նախագծային խումբն առաջարկել էր 19 առարկա՝ բնագիտամաթեմատիկական և հումանիտար բնագավառներից, որոնք հերթականությամբ դասակարգված էին: Երկրորդ և երրորդ փուլերը բացահայտում էին դժվար իրավիճակներում սովորողի արագ կողմնորոշումը, հոգեբանական նուրբ ասպեկտները[44]: Այսպիսով, ամփոփ կերպով ներկայացնում ենք նախագծի քայլերը.

1. Նախասիրությունների թեստի կազմում,
2. Թեստերի մշակում, սովորողների թեստավորում,
3. Թեստերի սխեմաների կազմում, տոկոսների հաշվարկ, թեստերի ստուգում (փուլ Ա),
4. Ընտրությամբ գործունեության խմբերի ստուգում՝ ըստ հաշվարկի արդյունքների, առաջարկների ներկայացում (փուլ Բ),
5. Յուրաքանչյուր սովորողի թերթիկի դիագրամների կազմում առաջին փուլի տոկոսային հարաբերությունների հիման վրա,
6. Յուրաքանչյուր դասարանի համար համապատասխան դիագրամների, վերլուծությունների, տոկոսային տվյալների կազմում երկրորդ փուլի տոկոսային հարաբերության հիման վրա,
7. Բոլոր դասարանների ընդհանուր ամփոփում,
8. Թեստերի արդիականցում:

Հասկանալու համար, թե ինչպիսի արդյունքներ է գրանցել նախագիծը՝ նշենք, որ այն անցկացվել է 2 անգամ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի ավագ դպրոց-հետազոտական վարժարանում, 1 անգամ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ս.

[44] Դ. Մուրադյան, զեկույց, 22 մարտի, 2023թ., *««Նախասիրությունների բացահայտում» նախագծի վերջնական ամփոփում»*, https://muradyandavit1program.code.blog/2023/03/22/%d5%b6%d5%a1%d5%ad%d5%a1%d5%bd%d5%ab%d6%80%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6%d5%b6%d5%a5%d6%80%d5%ab-%d5%a2%d5%a1%d6%81%d5%a1%d5%b0%d5%a1%d5%b5%d5%bf%d5%b8%d6%82%d5%b4-%d5%a9%d5%a5/

Գալստյանի անվան թիվ 2 ավագ դպրոցում[45]։ Նախագծային խումբը, աշխատանքի իրականացման շրջանակում, կարևորել էր նաև այլ ուսումնական հաստատությունների սովորողների թեստավորումը՝ դպրոցներում կիրառվող կրթական համակարգի տարբերությունները հասկանալու, մտածելակերպային ընդհանրությունները սահմանելու համար։

**Կարևոր արձանագրումներ և փաստեր.**

- 2022-2023 ուսումնական տարում թեստն անցկացվել է 7 իններորդ դասարաններում, թեստավորվել է շուրջ 140 սովորող։
- 2023-2024 ուսումնական տարում թեստն անցկացվել է 8 իններորդ դասարաններում։ Թեստավորվել է շուրջ 140 սովորող, որոնց թեստերը ևս ստուգվել են, վերլուծվել և ուղարկվել տնօրինությանը։
- ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Սաշա Գալստյանի անվան թիվ 2 ավագ դպրոցում թեստավորվել է թվով հիսունվեց 10-րդ դասարանի աշակերտ[46]։

Նախագիծը բազմիցս ապացուցել է իր օգտակարությունը՝ նպաստելով ուսումնական պլանների կազմման գործընթացի դյուրացմանը, խթանել է միջդպրոցական երկխոսությունը, համագործակցությունը, տրամադրել է էական տվյալներ սովորողների և նրանց նախասիրությունների վերաբերյալ։ Նախագիծը՝ իր ողջ ծավալով ու հարակից աշխատանքներով մեծ փաստահեն հետազոտություն է ներկայացնում, որն ունի թե՛ սոցիալական, թե՛ մարդաբանական, թե՛ մանկավարժական մեծ արժեք։

---

[45] Դ. Մուրադյան, զեկույց, 17 փետրվարի, 2023թ., *«Մեծամորի Ավագ դպրոցի թեստի վերջնական ամփոփում»*, https://muradyandavit1program.code.blog/2023/02/17/%d5%b4%d5%a5%d5%ae%d5%a1%d5%b4%d5%b8%d6%80%d5%ab-%d5%a1%d5%be%d5%a1%d5%a3-%d5%a4%d5%ba%d6%80%d5%b8%d6%81%d5%ab-%d5%a9%d5%a5%d5%bd%d5%bf%d5%ab-%d5%be%d5%a5%d6%80%d5%bb%d5%b6%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6/

[46] «Նախասիրությունների բացահայտում» երկարաժամկետ նախագիծ, Canva սահիկաշար, պատրաստված՝ 2024թ. «100 գաղափար Հայաստանի համար» մրցույթին ներկայացման նպատակով, https://www.canva.com/design/DAGVKM18GfM/CIxpg6TJLIhNyDSyUDZP8Q/view?utm_content=DAGVKM18GfM&utm_campaign=designshare&utm_medium=link2&utm_source=uniquelinks&utlId=hf88e93f2ed

Սույն նախագծի միջոցով փորձ արվեց ցուցադրելու, թե ինչքան բազմազան ու բազմաբնույթ նախագծեր են իրականացվում հետազոտական վարժարանում և կրթահամալիրի այլ մասնաճյուղերում, որոնք խթանում են սովորողների հետազոտական, հանրային ելույթ ունենալու հմտությունները, հարստացնում են գիտելիքների պաշարը։

Բացի վերոնշյալից, հետազոտական վարժարանի սովորողները (և ոչ միայն) հնարավորություն ունեն նաև մշակելու տարաբնույթ հետաքրքրաշարժ նախագծեր, այդ թվում՝ թատերական գործունեության շրջանակներում։ Թատրոնի շրջանակում սովորողները ոչ միայն զարգացնում են իրենց արտահայտչական խոսքը, բեմական շարժումն ու ստեղծագործական մտածողությունը, այլև սովորում են թիմային աշխատանքի, պատասխանատվության և փոխադարձ աջակցության կարևորությունը՝ մասնակցելով ներկայացումների բեմադրմանը՝ սկսած սցենարի մշակման փուլից մինչև հանդիսատեսի առաջ ելույթը։ 2024-25 ուսումնական տարիների նմանօրինակ հաջող փորձերից էին մի խումբ սովորողների բեմադրած «Արևելքի եղեմներին…» պիեսը[47] և ֆրանսահայ լրագրող, «Նոր Յառաջ» թերթի գլխավոր խմբագիր Ժիրայր Չոլաքեանի հետ համագործակցությամբ, դասավանդող Անուշ Ներսիսյանի համակարգմամբ, Լեռ Կամսարի մոտիվներով «Մեռելին վրա բժիշկ չեն կանչեր» ներկայացումը[48]։

---

[47] Մ. Շվազիր, տեսանյութ, 8 նոյեմբերի, 2024թ., *««Արևելքի եղեմներին» պիեսի առաջին բեմադրություն (-Միքայել Շվազիր)»*, https://www.youtube.com/watch?v=Zj8KqJpEK_w

[48] Ա. Ներսիսյան, հոդված, 26 սեպտեմբերի, 2025թ., *««Մեռելին վրա բժիշկ չեն կանչեր» ներկայացում»*, https://anushdotner.wordpress.com/2025/09/26/%D5%B4%D5%A5%D5%BC%D5%A5%D5%AC%D5%AB%D5%B6-%D5%BE%D6%80%D5%A1-%D5%A2%D5%AA%D5%AB%D5%B7%D5%AF-%D5%B9%D5%A5%D5%B6-%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B9%D5%A5%D6%80-%D5%B6%D5%A5%D6%80%D5%AF%D5%A1%D5%B5/

## 5. Հանդիպումներ ոլորտի մասնագետների հետ

Ուսումնական տարվա ողջ ընթացքում կրթահամալիրի բոլոր մասնաճյուղերում տարբեր մասնախմբերի կողմից կազմակերպվում են հանդիպում-քննարկումներ ոլորտի ներկայացուցիչների և մասնագետների հետ։ Հատկապես հետազոտական վարժարանում նման հանդիպումները կրում են մասնագիտական կողմնորոշման առանձնահատկություն՝ նպաստելով սովորողների մասնագիտական հետաքրքրությունների և կարիերայի հստակեցմանը։

Նախօրոք կազմված ուսումնական օրացույցով՝ սովորողներն ու մանկավարժները հստակ տեղեկություն են ստանում հանդիպման օրվա, ժամի, ընդհանուր պատկերի, ընթացակարգի, քննարկման թեմայի, մասնակից-սովորողների և հյուրերի անվանացանկերի մասին, հնարավորություն են ունենում գրանցվելու և հանդիպման մասը դառնալու։ Հանդիպում-քննարկումները կազմակերպվում են շաբաթական և ամսական կտրվածքներով, որից հետո դասավանդողները, որոնք համակարգել են հանդիպումներն ու զբաղվել են կազմակերպչա-տեխնիկական հարցերով, ամփոփում-հաշվետվություններ են ներկայացնում ուսումնական բլոգներում՝ անպայմանորեն ներառելով նաև սովորողների անհատական լուսաբանումները։

Որպես օրինակ՝ ստորև կմեջբերվեն հատվածներ վարժարանի հասարակագիտական մասնախմբի կողմից հրապարակված «2024-2025 ուստարվա կրթական գործունեության ամփոփում»-ից՝ աշխատանքների, հաշվետվությունների կազմման մասին գաղափար ձևավորելու, ընդհանուր տեսքին ծանոթանալու նպատակով։

*«Հետևելով կրթահամալիրի և հասարակագիտական մասնախմբի օրացույցներին՝ շուրջ տարվա ընթացքում մասնախումբն աշխատել է ըստ նախօրոք հրապարակված ամսական աշխատակարգի։ Ամսական աշխատակարգն ավելի համակարգված, կազմակերպված է դարձրել աշխատանքային գործունեությունը, որը նաև հեշտացրել է յուրաքանչյուր ամսվա և ուսումնական շրջանի ամփոփումները»* -

նշում է մասնախմբի ղեկավար Վարդան Կարապետյանը։

Նախորդ ուսումնական տարվա ընթացքում կրթահամալիրում կայացած հանդիպումներին մասնակցել են եղել այնպիսի հյուրեր, ինչպիսիք են ՀՀ Ազգային ժողովի պատգամավորները, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, ԵՊՀ Պատմության ֆակուլտետի, ՀՀ Փաստաբանների պալատի մասնագետները, ՀՀ պետական կառույցների պաշտոնատար անձինք (Հակակոռուպցիոն կոմիտե, Քննչական կոմիտե, ՄԻՊ), մասնավոր հիմնարկների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ (Երևանի ՄԱԿ-ի մոդել, Թրանսփարենսի Ինթերնեյշնլ), ազգային փոքրամասնությունների հարցերով անձինք (Եզդիների ազգային միության և «Քուրդիստան» կոմիտեի նախագահներ) և այլն[49]։ Ծրագրի ղեկավարության աջակցությամբ՝ կազմակերպվել են բովանդակային հանդիպումներ[50]՝ զբոսաշրջային ընկերությունների ներկայացուցիչների, ինչպես նաև բնագիտամաթեմատիկական և արվեստ-արհեստի ոլորտի առաջատար մասնագետների հետ։

Ուսումնական շրջանների ընթացքում կրթահամալիրը զարգացրել ու սերտացրել է իր հարաբերությունները մի շարք պետական և մասնավոր կառույցների հետ՝ ապահովելով ավելի ընդգրկուն, ներառական, հետաքրքիր ու բազմաբովանդակ քննարկման միջավայր անխտիր բոլոր սովորողների համար։

---

[49] Վ. Կարապետյան, հոդված, 30 հունիսի, 2025թ., *«2024-2025 ուստարվա կրթական գործունեության ամփոփում»*, https://vardankarapetyan.wordpress.com/2025/06/30/2024-2025-%d5%b8%d6%82%d5%bd%d5%bf%d5%a1%d6%80%d5%be%d5%a1-%d5%af%d6%80%d5%a9%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d5%a3%d5%b8%d6%80%d5%ae%d5%b8%d6%82%d5%b6%d5%a5%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%a1%d5%b6-%d5%a1/

[50] Մ. Ասատրյան, *«Հանդիպում-քննարկումներ ոլորտի մասնագետների հետ»* բաժին, https://martamara86.wordpress.com/category/%d5%b6%d5%a1%d5%ad%d5%a1%d5%a3%d5%ae%d5%a5%d6%80/

## 6. Արտագնա ուսուցում ճամփորդելու միջոցով

Արտագնա ճամփորդությունները դպրոցի համար կապեր ստեղծելու և զարգացնելու կարևորագույն գործիք են։ Կրթահամալիրը բազմօրյա ճամփորդություններ է կազմակերպում դեպի Հայաստանի տարբեր մարզեր ու բնակավայրեր՝ որոշ դեպքերում ճամփորդական-ուսումնահայրենագիտական բաղադրիչով (այցելություն պատմամշակութային, բնության գեղատեսիլ վայրեր), և որոշներում՝ այլ ուսումնական հաստատությունների հետ գործընկերություն սկսելու նպատակով, ինչը թույլ է տալիս ուսուցիչներին և սովորողներին փոխանակվել փորձով, ծանոթանալ մանկավարժական տարբեր մեթոդներին, նրանց արդյունավետությանը և ընդլայնել շփման շրջանակները։

Նմանատիպ ճամփորդությունները նաև նպաստում են ավելի ամուր կապերի ձևավորմանը, ինչը կարող է հանգեցնել համատեղ նախագծերի մշակման ու իրագործման և համագործակցության ծավալման[51]։ Բացի այդ, դրանք օգնում են սովորողներին հարմարվել նոր միջավայրին, ավելի ինքնուրույն դառնալ և սովորել թիմային աշխատանքի։

Կրթահամալիրի օժանդակությամբ մասնախմբերը որոշում են ճամփորդական ուղղությունները, այնուհետև հստակեցնում ճամփորդության նպատակները, արդյունքները, խնդիրները, որին հաջորդում է խմբերի ձևավորումը։

Նշենք նաև, որ սեբաստացի սովորողի անձնական նախաձեռնությամբ այցելություններ ևս կարող են կազմակերպվել։

2023թ. հոկտեմբերի 20-ին նախագծային մի խումբ, հասարակագիտական մասնախմբի անդամների գլխավորությամբ, մեկնեց Արագածոտնի մարզի, Թալինի տարածաշրջանի Աշնակ գյուղ, ճանապարհին նաև կանգառներ ունեցավ Ներքին

---

[51] Նման փորձ էր քրդական համայնքի ներկայացուցչի, Ապարանի տարածաշրջանի Սիփան գյուղի աշակերտի հետ համատեղ հետազոտական աշխատանքը, որը ներկայացվել է 2024-25 ուսումնական տարվա ընթացքում։ Մինչ այդ, նախորդել են մի շարք հանդիպումներ թե՛ հետազոտական վարժարանում և թե՛ Սիփանի միջնակարգ դպրոցում։ Հետազոտական աշխատանքը ներկայացվել է նաև Շիրակի մարզի Գյումրու թիվ 45 ավագ դպրոցում հունվարին կայացած «ՀՀ ազգային փոքրամասնությունների մշակույթը» թեմայով հանրապետական աշխատարանի շրջանակներում։

Բազմաբերդ, Օթևան գյուղերում[52]: Ճամփորդությունը հագեցած էր կրթական փոխանակումների ծրագրերով, հանձինս՝ հետազոտական աշխատանքների ներկայացմամբ և տեխնոլոգիական-բնագիտական լաբորատորիայի ցուցադրմամբ:

Նույն թվականի նոյեմբերի վերջ՝ կրթահամալիրում ամենամյա հարիսայի ծեսի շրջանակներում, հասարակագիտական մասնախումբը, փոխադարձ այցով, հյուրընկալեց Աշնակի դպրոցի տարատարիք սովորողների խմբին[53]:

Մեկ այլ վառ օրինակ է Գյումրու թիվ 45 ավագ դպրոցի հետ հաստատված սերտ համագործակցությունը՝ անվանական մրցանակաբաշխություններին մասնակցելու ձևաչափով: Գյումրու սաներն ու դասավանդողներն այս տարի հայտարարված «Տիգրան Հայրապետյան 2025» անվանական բաց մրցույթին մասնակցեցին նախագծային խմբով, որի յուրաքանչյուր անդամ պատրաստել էր հետաքրքիր ու ուսուցողական նախագիծ հումանիտար բնագավառից: Ապրիլի 5-ին ՀԲԸՄ-ում (Հայաստանի ընդհանուր բարեգործական միություն) տեղի ունեցավ մրցանակաբաշխությունը, որի շրջանակներում Գյումրու թիվ 45 դպրոցի պատմության դասավանդողը[54] պարգևատրվեց մրցանակով[55]:

---

[52] Վ. Կարապետյան, հոդված, հոկտեմբերի 24, 2023թ., *«Ուսումնահայրենագիտական-կրթական փոխանակումներով Թալին-Աշնակ. Ճամփորդապատում»*, https://vardankarapetyan.wordpress.com/2023/10/24/%d5%b3%d5%a1%d5%b4%d6%83%d5%b8%d6%80%d5%a4%d5%a1%d5%ba%d5%a1%d5%bf%d5%b8%d6%82%d5%b4-%d5%b4%d5%a1%d5%bd-1-%d5%ab%d5%b6%e2%80%a4%d5%a1%d5%b7%d5%b6%d5%a1%d5%af%d5%b8%d6%82%d5%b4-%d5%bd%d5%a1%d5%bd/

[53] Պատմության և հասարակագիտության դասավանդողների մասնախումբ, հոդված, 20 նոյեմբերի, 2023թ., *«Ընդունելության ծրագիր»*, https://hasarakaget.wordpress.com/2023/11/20/%d5%a8%d5%b6%d5%a4%d5%b8%d6%82%d5%b6%d5%a5%d5%ac%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%a1%d5%b6-%d5%ae%d6%80%d5%a1%d5%a3%d5%ab%d6%80-6/

[54] Դ. Մուրադյան, հոդված, 21 մարտի, 2025թ., *««Տիգրան Հայրապետյան 2025» մրցանակի փաթեթ. Արտակ Գևորգյան (Գյումրու թիվ 45 միջն. դպրոց, դասավանդող)»*, https://muradyandavit1program.code.blog/2025/03/21/%d5%bf%d5%ab%d5%a3%d6%80%d5%a1%d5%b6-%d5%b0%d5%a1%d5%b5%d6%80%d5%a1%d5%ba%d5%a5%d5%bf%d5%b5%d5%a1%d5%b6-2025-%d5%b4%d6%80%d6%81%d5%a1%d5%b6%d5%a1%d5%af%d5%ab-%d6%83%d5%a1%d5%a9%d5%a5%d5%a9-4/

[55] «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի պաշտոնական կայքէջ, հոդված, 5 ապրիլի, 2025թ., *«Տիգրան Հայրապետյանի «Վերջին աշունը» գրքի շնորհանդես և մրցանակաբաշխություն»*, https://mskh.am/posts/post/_id/67f6c8b9f547fd3617c37f8a

Վերոնշյալ օրինակն ապացուցեց, թե ինչքան կարևոր է հայաստանյան տարբեր ուսումնական հաստատությունների հետ կապերի խթանումը՝ տարբեր ձևաչափերով՝ հանուն ընդհանուր բարեկեցության և զարգացման, և կրթահամալիրը փորձում է բոլոր հնարավոր ձևերով ամրապնդել հարաբերություններն իր գործընկեր-դպրոցների հետ, ինչպես նաև ստեղծել նոր կապեր։

Արտագնա ուսուցման և ճամփորդությամբ կրթության կազմակերպման համատեքստում կրթական փոխանակումներն ունեն համակարգային և բովանդակային առանցքային նշանակություն։ Այս գործընթացը հիմնված է փոխներգործուն ուսուցման սկզբունքի վրա, որտեղ սովորողը հնարավորություն է ստանում յուրացնել նոր հմտություններ և արժեքներ՝ անմիջականորեն հաղորդակցվելով այլ ուսումնական հաստատության իր հասակակցի հետ, ինչը խթանում է կրթական կապերի ամրապնդումը։ Նույն տրամաբանությամբ, մանկավարժական աշխատողը, համագործակցելով գործընկերոջ հետ, իրականացնում է մեթոդական փորձի փոխանակում և մասնագիտական քննարկումներ, ինչը նպաստում է մանկավարժական գործիքակազմի հարստացմանը և նորարարական մոտեցումների տեղայնացմանը։ Այսպիսով, կրթական փոխանակումների շնորհիվ ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցները միաժամանակ հանդես են գալիս և՛ որպես սովորող, և՛ որպես փորձի փոխանցող՝ ընդլայնելով կրթական միջավայրի սահմանները։

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում ճամփորդությամբ ուսուցումը առարկայական ծրագրերի, նախագծերի կարևոր բաղադրիչ է[56]։ Ընդգծենք, որ նմանաբովանդակ ուղևորություններ կազմակերպվում են Հայաստանի տարբեր անկյուններ և նույնիսկ Հայաստանից դուրս՝ հարևան երկրներ՝ Վրաստան, Թուրքիա[57],

[56] Մ. Ասատրյան, հոդված, 10 օգոստոսի, 2023թ., *«Աշխարհս մե փանջարա է»*, https://martamara86.wordpress.com/2023/08/10/%d5%a1%d5%b7%d5%ad%d5%a1%d6%80%d5%b0%d5%bd-%d5%b4%d5%a5-%d6%83%d5%a1%d5%b6%d5%bb%d5%a1%d6%80%d5%a1-%d5%a7/

[57] Ե. Սարգսյան, Մեդիամանկավարժական բլոգ, հոդված, 4 փետրվարի, 2025թ., *«Կարդում ենք Չարենց Չարենցի քաղաքում»*, https://elenasargsyan.wordpress.com/2025/02/04/%d5%af%d5%a1%d6%80%d5%a4%d5%b8%d6%82%d5%b4-%d5%a5%d5%b6%d6%84-%d5%b9%d5%a1%d6%80%d5%a5%d5%b6%d6%81-

Եվրոպական միության պետություններ, դիցուք՝ Մոնտենեգրո[58], Ֆրանսիա, Հորդանան[59]՝ ավագ դպրոցի ղեկավարի ուղեկցությամբ՝ հետապնդելով նպատակ՝ զարգացնել սովորողների աշխարհայացքը, գիտելիքները տարբեր պետությունների մասին, ճանաչել աշխարհին իր բոլոր երանգներով, պատկերացում կազմել մշակութային ժառանգության մասին, ձեռք բերել ծանոթություններ և իհարկե գլխավոր առաքելությունը՝ ներկայացնել Հայաստանի Հանրապետությունն արտերկրում:

## 7. Ռազմամարզական բաղադրիչը կրթահամալիրում. Արատես և Արտանիշ

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրը և հատկապես՝ ավագ դպրոց-հետազոտական վարժարանը, հավատարիմ լինելով հեղինակային կրթական ծրագրին, ռազմամարզական բաղադրիչն իրականացնում է արտագնա ճամբարների ձևաչափով՝ հնարավորություն ընձեռելով սովորողներին բնության գրկում հարստացնելու իրենց տեսական և գործնական գիտելիքները ռազմամարզական ոլորտում՝ հատուկ նախատեսված պայմաններում:

Ռազմամարզական ճամբարները, որոնք գործում են «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի սովորողների համար, երկուսն են՝ Արատեսը (Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք)՝ բնության և լեռների գրկում, և Արտանիշը (Գեղարքունիքի մարզ, Շողակաթ համայնք)՝ Սևանա լճի ափամերձ տարածքում: Ճամբարի ղեկավարներին՝ դասավանդողներին, կցվում են հրամանատար-մարզիչներ, որոնք ապահովում են

%d5%b9%d5%a1%d6%80%d5%a5%d5%b6%d6%81%d5%ab-%d6%84%d5%a1%d5%b2%d5%a1%d6%84%d5%b8%d6%82%d5%b4-3/

[58] Մ. Ասատրյան, հոդված, 20 հունիսի, 2024թ., *«Ամառային ճամբար Մոնտենեգրոյում»*, https://martamara86.wordpress.com/2024/06/20/%d5%a1%d5%b4%d5%a1%d5%bc%d5%a1%d5%b5%d5%ab%d5%b6-%d5%b3%d5%a1%d5%b4%d5%a2%d5%a1%d6%80-%d5%b4%d5%b8%d5%b6%d5%bf%d5%a5%d5%b6%d5%a5%d5%a3%d6%80%d5%b8%d5%b5%d5%b8%d6%82%d5%b4/

[59] Շողակաթ TV, լուսաբանում, 19 նոյեմբերի, 2024թ., *«Մխիթար Սեբաստացի հետազոտական վարժարանի աշակերտները ուխտավորաբար մեկնել են Հորդանան»*, https://www.youtube.com/watch?v=bcs3zNwknvM

պարապմունքների բնականոն ընթացքը, կազմակերպում են մարտավարա-ռազմավարական խաղեր, կարգավորում են հերթապահության ընթացակարգերը:

Նշենք նաև, որ այլ հասարակական կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցության շնորհիվ, սովորողները հնարավորություն են ստացել մասնակցելու բազմաբնույթ ճամբարների և միջոցառումների, դիցուք՝ ՀՀ ԵԿՄ (Երկրապահ կամավորականների միություն) աջակցությամբ, սովորողները մասնակցել են «Եռասերունդ երկրապահ» ռազմամարզական ճամբարի հավաքներին[60], իսկ «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի» հովանավորությամբ՝ Ուրցաձորի կովկասյան կենսաբազմազանության պահպանման կենտրոնում կազմակերպված ճամբարին[61]:

Ռազմամարզական բաղադրիչի՝ ուսումնական պլանի կարևոր ու անհրաժեշտ կետ հաստատվելուց ի վեր՝ ճամբարի մասնակցության հարցում գրանցվել է սովորողների թվի աճ: Ներկայացնենք 2024-25 ուսումնական տարվա տվյալները.

- Ռազմամարզական ճամբարի աշնանային շրջանում կազմակերպվել է շուրջ 14 հերթափոխ, որին մասնակցել են 218 իններորդ դասարանի սովորողներ,
- Ճամբարի ամառային 12 հերթափոխներին ընդհանուր թվով մասնակցել է 125 տասներորդ դասարանցի:
- 11-րդ դասարանցի շուրջ 93 սովորող մասնակցել է 11 հերթափոխներին[62]:

Բացի վերոնշյալ ճամբարներից, կրթահամալիրում ամսական կտրվածքով մի քանի անգամ վերապատրաստված և որակավորում ունեցող մասնագետ-հրամանատարների կողմից կազմակերպվում են տարաբնույթ ռազմամարզական պարապմունքներ, որոնք հետագայում լուսաբանվում են ռազմական կառույցների

---

[60] «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Միջին դպրոց, հոդված, 24 հուլիսի, 2021թ.. *«Աշխատանքային այց «Ծովինար» ճամբար»,* https://teachersmskh.wordpress.com/2021/07/24/

[61] Է. Ագջոյան, հոդված, 1 հունվարի, 2024թ., *«Դեպի Ուրցաձոր-նախապատրաստական փուլ»*, https://emanuelagjoyan.blogspot.com/2024/01/blog-post_16.html

[62] Ավագ դպրոց-հետազոտական վարժարանի գրասենյակ, 2024-25 ուսումնական տարի, *«Համփորդությունների մասնակցության մասին տեղեկագիր»*, https://mskh-my.sharepoint.com/:x:/r/personal/l_gasparyan_mskh_am/_layouts/15/

կողմից[63]: Նախնական զինվորական պատրաստության այլընտրանքային ծրագրի շնորհիվ սովորողները գործնական հմտություններ են ձեռք բերում ՊՆ զորամասերում և կրակատեղիներում իրականացվող ռազմամարզական նախագծերի միջոցով:

## 8. Հայրենասիրական բաղադրիչը կրթահամալիրում

*«Հայաստանն այն հողն է, որտեղ քո ոտքերի տակից ուժ է գալիս: Դա միայն հող չէ, դա հոգի է, որը խոսում է քեզ հետ: Եթե մարդը կորցնում է իր կապը հարազատ հողի հետ, նա կորցնում է իր լույսը»:*

**Վիլյամ Սարոյան**

Կրթահամալիրի հեղինակային կրթական ծրագրում հայրենասիրական բաղադրիչն ունի բազմաշերտ արտացոլում, որը դուրս է գալիս ավանդական ուսումնական գործընթացի շրջանակներից: Այն դրսևորվում է ինչպես ամենշաբաթյա մեդիա-ուրբաթ համերգների, այնպես էլ բարձունքների հաղթահարման և այլ համակրթական փառատոնների միջոցով:

Սույն աշխատանքի շրջանակներում, հայրենասիրական դաստիարակության նշանակությունը բացահայտելու նպատակով կուսումնասիրենք այդ երկու առանցքային միջոցառումները՝ դիտարկելով դրանց դերը սովորողների ազգային ինքնագիտակցության և քաղաքացիական դիրքորոշման ձևավորման գործում:

---

[63] Մ. Ասատրյան (ԶինՈՒԺ-Առաջին ալիք), տեսանյութ, 3 մայիսի, 2024թ., *«Ռազմամարզական Զինուժ»,* https://youtu.be/h3Jd5jP4hm8

## 8.1 Ուրբաթ-համերգներ, ընդհանուր պարապմունքներ, ուսումնական ժամերգություններ

Ամեն ուրբաթ, ժամը 15.15-16.00, տեղի ունեցող ընդհանուր մեդիապարապմունքը (այսուհետ՝ պարապմունք) նախատեսված է կրթահամալիրի ուսումնական օրացույցով, ներառվում է մանկավարժական աշխատողի աշխատաժամանակում:

Պարապմունքը կազմակերպվում է Մայր դպրոցի Մարմարյա սրահում՝ համերգի ձևով և mskh.am-ում՝ որպես կրթահամալիրի ուսումնական շաբաթվա մեդիաամփոփում: Պարապմունքի բովանդակությունը որոշվում է կրթահամալիրի ուսումնական օրացույցով. ներկայացվում են դասարան-համույթի, ակումբ-համույթի, դպրոց-համույթի, կրթական ծրագիր-համույթի ծրագրային ելույթները՝ ընթերցում, թատերական, երգ, պար: Դրանք ուղեկցվում են հատուկ պատրաստված տեսանյութերով: Մայր դպրոցում պարապմունքի ժամանակ սահմանվում է հատուկ ռեժիմ, որ բացառում է երթևեկը: Պարապմունքը բաց է բոլորի՝ սովորողների, ծնողների, այլ հյուրերի համար: Նշենք, որ ելնելով անհրաժեշտությունից, ուրբաթ-համերգը կարող է կազմակերպվել արտագնա՝ հասարակական վայրերում, համերգասրահներում, այլ հանրային սրահներում՝ համերգի, ցուցադրության, ելույթի տեսքով[64]:

Ազգային ինքնագիտակցության, հայկական մշակույթի և արվեստի ճանաչումից բացի, մեդիա-ուրբաթ համերգների գաղափարը նաև համերաշխության, համախմբվածության, միասնականության մեջ է[65]: Վերոնշյալի վառ ու տպավորիչ օրինակն է 2026 թվականի փետրվարին կրթահամալիրում իրականացված «Հայկական

---

[64] Ուսուցչական տեղեկատվական բլոգ, *«Մեդիաուրբաթ-համերգ կազմակերպման կարգը»*, https://teachersmskh.wordpress.com/wp-content/uploads/2019/01/%D5%84%D5%A5%D5%A4%D5%AB%D5%A1%D5%B8%D6%82%D6%80%D5%A2%D5%A1%D5%A9-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A5%D6%80%D5%A3.pdf

[65] Ա. Թոփչյան, տեսանյութ, 29 մայիսի, 2025թ., *«Յոթնասնություն-ցնծություն. 2025 շրջանավարտ. բլեյանդպրոց»*, https://www.youtube.com/watch?v=7GXESyDgRCQ

հարսանեկան ծես»[66] նախագիծը, որն իրականություն դարձավ բացառապես սովորողների նախաձեռնողականության և ակտիվ ներգրավվածության շնորհիվ: Փեսացուի և հարսնացուի, ծիսակարգի այլ կերպարների դերեր էին ստանձնել ավագ և միջին դպրոցների սովորողները՝ վերածելով ուրբաթ-համերգը մի ամբողջ հարսանեկան տոնակատարության[67]՝ իր բոլոր նրբություններով, արարողություններով, ավանդական երգուպարով, տարազով, հայկական մշակույթի այլ տարրերով:

Հետապնդելով ազգային մշակույթի յուրացման, հոգևոր երգերի ու շարականների կատարման և տարածման նպատակներ՝ ուսումնական ժամերգությունները՝ որպես ուսումնական պլանի և կրթահամալիրյան գործունեության անբաժան, պարտադիր բաղկացուցիչ, կազմակերպվում են ամեն ուրբաթ՝ Երևանի Սբ. Երրորդություն եկեղեցում: Ուսումնական ժամերգություններին, օրացույցով նախատեսված, մասնակցում են մասնաճյուղ դպրոց-պարտեզների, քոլեջի սովորողները, ընդհանուր պարապմունքն անցկացնում են հոգևոր միջավայրում: Նման միջոցառումների գաղափարը ծիսական հոգևոր արարողակարգերի, մշակույթի ուսումնասիրությունն է[68]: Նշենք նաև, որ ուխտագնացություններն արտագնա ճամփորդությունների կարևոր մաս են կազմում:

Արտերկրի ուսումնական հաստատությունների հետ համագործակցությունը կրթահամալիրի հեղինակային ծրագրի կարևորագույն բաղադրիչներից է, ինչը դրսևորվում է երկկողմ հարաբերությունների խորհրդանշական համերգների և փոխայցելությունների կազմակերպմամբ:

---

[66] Լ. Խաչոյան, հոդված, 20 դեկտեմբերի, 2025թ, *«Հայկական հարսանեկան ծես»,* https://lusinekhachoyan7.wordpress.com/2025/12/20/%d5%b0%d5%a1%d5%b5%d5%af%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d5%b0%d5%a1%d6%80%d5%bd%d5%a1%d5%b6%d5%a5%d5%af%d5%a1%d5%b6-%d5%ae%d5%a5%d5%bd/

[67] Հետազոտական վարժարան, հոդված, 7 փետրվարի, 2026թ., *«Վարժարանի ուրբաթ-համերգը»,* https://mskh.am/posts/post/_id/69889bb84d4677d6adfe9410

[68] Հ. Մաթևոսյան, հոդված, 14 օգոստոսի, 2021թ., *«Նախագիծ «Ուսումնական ժամերգություն»»,* https://hasmikmat369.wordpress.com/2021/08/14/%d5%b6%d5%a1%d5%ad%d5%a1%d5%a3%d5%ab%d5%ae-%d5%b8%d6%82%d5%bd%d5%b8%d6%82%d5%b4%d5%b6%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d5%aa%d5%a1%d5%b4%d5%a5%d6%80%d5%a3%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6-2/

Որպես արդյունավետ համագործակցության վառ օրինակ՝ կարելի է դիտարկել Վրաստանի Լագոդեխի քաղաքի «Հերեթի» պարի պատանեկան համույթի հետ ամենամյա համատեղ «Հայ-վրացական ուրբաթ-համերգի» անցկացումը[69]: Այս միջոցառումները սովորողներին ընձեռում են եզակի հնարավորություն՝ ինքնաբացահայտվելու, սեփական մշակույթը ներկայացնելու, նոր ընկերական կապեր հաստատելու և փորձի փոխանակում իրականացնելու համար:

Բացի այդ, կրթահամալիրի սովորողները փոխադարձ այցերով մեկնում են Լագոդեխի, ինչն ուսուցման այլընտրանքային ձևերից է: Անցյալ տարի հանդիսավորությամբ նշվեց հայ-վրացական կապերի հաստատման 15-ամյակը, ինչը փաստում է համագործակցության կայունության և շարունակականության մասին:

Անցկացվող մեդիա-ուրբաթ համերգների մասին հիշատակելիս՝ կարևոր է խոսել նաև անվանական համերգների անցկացման մասին, որոնք նվիրվում են հայտնի պետական-հասարակական-մշակութային գործիչներին: Այդ ընթացքում, ուսումնական օրացույց հաստատված, ավագ դպրոց-հետազոտական վարժարանում անցկացվում են անվանական շաբաթներ, որոնց շրջանակներում սովորողներն ուսումնասիրում են տվյալ անձի կյանքը, կարիերան, թողած ժառանգությունը, հանդես են գալիս ելույթներով, կատարում են վերլուծություններ, ներկայացնում հանրությանը:

Նմանօրինակ միջոցառումներից են «Հայրապետյանական» և «Սիրադեղյանական» օրերը, որոնք համապատասխանաբար տեղի են ունենում ամեն տարի գարնանն ու աշնանը:

---

[69] Ռ. Շագինյան, հոդված, 9 ապրիլի, 2024թ., *«Լագոդեխիի «Հերեթի» պատանեկան համույթը կրթահամալիրում է»*, https://shaginyanrina.wordpress.com/2024/04/09/%D5%AC%D5%A1%D5%A3%D5%B8%D5%A4%D5%A5%D5%AD%D5%AB%D5%AB-%D5%B0%D5%A5%D6%80%D5%A5%D5%A9%D5%AB-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%B8%D6%82/

## 8.2 Բարձունքի հաղթահարումներ, վերելքներ

*«Այս երկիրը բառերով սիրվող երկիր չէ, անհատական սիրո երկիր չէ։*
*Այս երկիրը համընդհանուր սիրո երկիր է»։*

**Վազգեն Սարգսյան**

Ինչպես նշվեց վերևում՝ հայրենասիրության դաստիարակման կարևորագույն միջոցներից են ճամփորդությունները և հատկապես՝ հայաստանյան բարձունքների հաղթահարումները։ Յուրաքանչյուր տարի՝ Անկախության (սեպտեմբերի 21) և Հանրապետության (մայիսի 28) տոների առթիվ կազմակերպվում են վերելքներ տարբեր ուղղություններով։ Ցանկում ներառվում են Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերը (մեկօրյա և բազմօրյա)։ Վերելքներ են կազմակերպվում նաև սեպտեմբերի 1-ի՝ գիտության և դպրության օրվա առթիվ, նորեկ սովորողների համար։

Այս վերելքները հստակ ցույց են տալիս սեբաստացիական համայնքի՝ իր պատմական արժեքների հանդեպ հարգանքն ու դրանք պաշտպանելու պատրաստակամությունը։ Բարձունքի հաղթահարումները, ըստ էության, ոչ միայն հավաքականության խորհրդանիշ են, այլ նաև հայրենասիրության, հատկապես՝ պետությունը տարբեր կողմերից, տարբեր ձևերով ու տեսանկյուններից սիրելու ինդիկատոր։

2025 թվականի սեպտեմբերի 21-յան հաղթահարումներն ամբողջ Հայաստանով հետևյալն էին.

- Սեպտեմբերի 17 - Դեպի Աժդահակ (Տավուշ)
- Սեպտեմբերի 19 - Ապարանի ջրամբար, Աղավնո բարձունք (Արագածոտն)
- Սեպտեմբերի 20
    - Հանքավանի թաքնված ջրվեժներ (Կոտայք)
    - Շարայի լեռ (Շիրակ)
- Սեպտեմբերի 21

- Թռչկանի ջրվեժ (Լոռի)
- Գեղարոտի ջրվեժ (Արագածոտն)
- Գութանասար (Կոտայք)

- Սեպտեմբերի 20-21 - Դիմաց լեռ (Տավուշ)
- Սեպտեմբերի 18-21 - Գորիս, Խնձորեսկ, Տաթև (Սյունիք)
- Սեպտեմբերի 26-28 - Սիսիան-Որոտնաբերդ (Սյունիք)[70]

Միայն ավագ դպրոց-հետազոտական վարժարանից սեպտեմբերի 18-28-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Անկախության 34-ամյակի առիթով բարձունքների հաղթահարմանը մասնակցել են շուրջ 250 սովորողներ, ուսուցիչներ։ Հարկ է նշել, որ բարձունքի հաղթահարումներ ուսումնական տարվա կտրվածքով կազմակերպվում են կրթահամալիրի բոլոր մասնաճյուղերում՝ դպրոց-պարտեզներում, քոլեջում և վարժարանում։

## 9. «Ցտեսություն-ցնծություն» համերգները, վերջին զանգը կրթահամալիրում

Անշուշտ, ավագ դպրոցի գործունեության մասին խոսելիս, անկարելի է չանդրադառնալ շրջանավարտների ամենամյա «Ցտեսություն-ցծնություն» տոնական միջոցառումներին՝ որպես Վերջին զանգի այլընտրանք։

«Ցտեսություն» նախագիծը հետազոտական վարժարանի 12-րդ դասարանի ուսումնական պլանով որոշված նախագիծ է։ Նախագծի նպատակն է շրջանավարտի պատրաստությունը դարձնել կրթական-մշակութային ծրագիր. յուրաքանչյուր սովորողին հնարավորություն տալ անհատականացնելու նախագիծը, հանդես գալու նախաձեռնություններով։

---

[70] «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի պաշտոնական կայքէջ, հոդված, 20 սեպտեմբերի, 2025թ., *«Անկախության օրը Հայաստանի բարձունքներին»*, https://mskh.am/posts/post/_id/68c16ed7f55596704d6eb354

Կրթահամալիրի սովորողները, բացի պարտադիր ուսումնական դասընթացներից և նախագծերից, հնարավորություն ունեն մասնակցելու լրացուցիչ կրթական, կամավորական և անհատական աշխատանքների, որոնք նպաստում են նրանց նախասիրությունների զարգացմանը և մասնագիտական կողմնորոշմանը։ Կարևոր է, որ նրանք կարող լինեն հանրայնացնելու և կիսվելու այդ աշխատանքների հաջողված փորձով։ 12-րդ դասարանցի սովորողների կողմից մշակված «Ես եմ» նախագիծը[71] ինքնաբացահայտման, ճանաչման, ինքնաներկայացման բաց, ազատ հարթակ է։

Սեբաստացի շրջանավարտի գործունեության շարքում առանձնահատուկ տեղ ունեն ավանդական միջոցառումները. ուսումնական ժամերգությունը տեղի է ունենում յուրաքանչյուր ուրբաթ Սուրբ Երրորդություն եկեղեցում՝ շարականների և դպրաց դասի ներկայացմամբ, իսկ «Ցտեսություն-ցնծություն» տոնախմբությունը ծառայում է որպես «Արվեստ» դասընթացի հանրային ամփոփիչ ներկայացում՝ ընդգծելով ազգային երգի, պարի նշանակությունը՝ միասնականության կերտման գործում։

Բացի այդ, հայրենագիտական եռօրյա ամփոփիչ ճամփորդությունը «Ցտեսություն» նախագծի մաս է, որի շրջանակում սովորողները, նախապես ընտրելով ուղղությունը, ուսուցում են ստանում ճամփորդության միջոցով՝ նպատակ ունենալով բացահայտելու նոր վայրեր և խորացնելու հայրենագիտական գիտելիքները[72]։

---

[71] «Մխիթար Սեբաստացի» պաշտոնական կայքէջ, հոդված, *«Ես եմ»*, https://mskh.am/posts/post/_id/67d3b761816fd94b6318ad37

[72] Ավագ դպրոցի ղեկավարի բլոգ, հոդված, 20 հունվարի, 2025թ., *«Ցտեսություն նախագծի մոդուլ»*, https://highschoolmskh.wordpress.com/2025/01/20/%D6%81%D5%BF%D5%A5%D5%BD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A3%D5%AE%D5%AB-%D5%B4%D5%B8%D5%A4%D5%B8%D6%82%D5%AC/

# 3. Անվանական շաբաթները, ամենամյա հավաքները

## 3.1 Ամենամյա հավաքների առաքելությունն ու գործառութային նպատակները

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի մասնաճյուղ-դպրոցներում ուսումնական տարվա կտրվածքով կազմակերպվում են մի շարք հավաքներ, անվանական շաբաթներ, որոնց ընթացքում ամփոփվում են ուսումնական շրջանի ընթացքում կատարված աշխատանքները, ներկայացվում են հետաքրքիր ու առանցքային նախագծեր, նախաձեռնվում են հանդիպումներ ոլորտի մասնագետների հետ, հետազոտական աշխատանքների պաշտպանություններ, այցելություններ պետական և մասնավոր կառույցներ, ուսումնահայրենագիտական ճամփորդություններ և այլն։

Յուրաքանչյուր տարվա աշնան և գարնան ընթացքում կազմակերպվում են համապատասխանաբար «աշնանային» և «գարնանային» («մայիսյան») ստեղծագործական հավաքները։ Հեղինակային կրթական ծրագրի հոբելյանական 20-րդ աշնանային ստեղծագործական հավաքի նպատակներին, առաքելություններին և բնութագրումներին անդրադառնանք ստորև.

*«Հոկտեմբերի 1-24-ը կրթահամալիրի, դպրոց-պարտեզներում, Միջին դպրոցում, Հետազոտական վարժարանում, Քոլեջում, ուսումնական կենտրոններում, մանկավարժական լաբորատորիաներում ստուգատես է՝ կրթահամալիրի ուսումնական օրացույցով, «Նորարարական մանկավարժության ծրագրերի իրականացում հանրակրթությունում» ծրագրի 2025 թ. աշխատանքներով։*

*Հավաքին ներկայանում են մանկավարժական աշխատողները, սովորողները՝ իրենց ձեռքբերումներով, փորձով, 2025, 2026թթ. նախագծերով, անհատական և*

*խմբային նախաձեռնություններով. ծնողները՝ սեբաստացիական փորձառությամբ, մասնագիտական աջակցությամբ»*[73]:

**Ֆիզիկական միջավայրում՝ կրթահամալիրի մասնաճյուղ դպրոցներում, Քոլեջում, ուսումնական կենտրոններում կազմակերպվող հավաքի ուղղությունները.**

1. բացօթյա ուսումնական պարապմունքներ, քննարկումներ. «Բացօթյա ուսուցման օր» նախագիծ,
2. «Կրթական պարտեզ բնակելի արվարձանում» նախագիծ. խնդիրների հանրայնացում,
3. հեղինակային հիմնական և լրացուցիչ կրթական ծրագիրը ուսումնական կենտրոններում, արհեստանոց-արվեստանոց-լաբորատորիաներում,
4. նորամուտ. ծրագրեր, նախագծեր, նախաձեռնություններ, նոր տարածքներ,
5. մուտք բլեյան դպրոց. մենթորական լաբորատորիան 2025-2026 ուսումնական տարում,
6. կարիերայի կենտրոնը 2025-2026 ուսումնական տարում,
7. «Սովորող սովորեցնող» նախագծեր,
8. հինգ տարեկանների նախադպրոցական հեղինակային ծրագրի զարգացում,
9. «Սեբաստացիներ» հիմնադրամի հետ ֆոնդհայթայթման նախագծերի հանրայնացում կրթահամալիրի մասնաճյուղերում,
10. կամավորական աշխատանքի նախագծեր. հանրայնացում, փորձի ներկայացում,
11. կրթական փոխանակումներ,
12. բլեյան բաց ցանց. աշխատանքներ, խնդիրներ, գործընկերներ,
13. ճամբարային լրացուցիչ կրթություն. շուրջտարյա դպրոց բնության գրկում, ամառային լողափնյա ճամբար կրթահամալիրի դպրոց-պարտեզներում,

---

[73] «Մխիթար Սեբաստացի» պաշտոնական կայքէջ, հոդված, 1 հոկտեմբերի, 2025թ., *«Հեղինակային կրթական ծրագրի 20-րդ աշնանային ստեղծագործական հավաք»*, https://mskh.am/posts/post/_id/68d7d2a9ca1a37ec23fd7e94

քոլեջում, կրթահամալիրի Արտանիշի վրանային ճամբար. ցուցանիշներ, 2026թ. զարգացման նախագծեր,

14. կրթահամալիրը բաց լաբորատորիա գործընկերների համար,
15. Կրթահամալիրի դպրոցներում մշտական ցուցադրություններ, Սեբաստացի հիմնադրամի հանգանակության արկղիկ,
16. Կամավորական աշխատանքի կազմակերպումը Հետազոտական վարժարանում, Քոլեջում. փորձի ներկայացում, գործընկերների ներառում,
17. փառատոնով, ծեսով, համերգով ուսուցման այցեքարտ բացօթյա ներկայացումներ,
18. ուսումնական համատեղ ճամփորդություններ, քայլքեր[74]։

Կրթահամալիրում արդեն 20-րդ անգամ մշակվող, իրականացվող Աշնանային (հոկտեմբերյան) հավաքի վերաբերյալ կարևոր է արձանագրել, որ այն ունի հստակ ամրագրված ավանդույթներ, նպատակ, բայց ամեն տարի նոր ձևաչափով, խնդիրներով ու կազմակերպումով է ներկայանում։ Հեղինակային կրթական ծրագիրն անշարժ մարմին չէ. այն անընդհատ զարգանում է, լրամշակվում՝ մարդու (սովորողի), աշխարհի կրթական պահանջներին, նորարարություններին համահունչ։

Ըստ այդմ, Հոկտեմբերյան ամենամյա հավաքներն էլ զարգացող, ամեն տարի նոր շեշտադրումներ առաջ բերող, նոր կազմակերպումով ու փորձով ներկայացող հարթակներ են։ Հոկտեմբերյան հավաքը թե՛ տեղական, թե՛ միջազգային գործընկերներին, ընկերներին, կրթության ոլորտի մասնագետներին, շահառու այլ խմբերին ներկայանալու, հեղինակային կրթական ծրագրի ձեռքբերումները ներկայացնելու, կարևոր կրթական խնդիրներ ու զարգացումներ քննարկելու բաց,

[74] Մանկավարժության լաբորատորիա, հոդված, 21 օգոստոսի, 2025թ., *«Աշնանային մանկավարժական հոբելյանական 20-րդ հավաքի բովանդակությունը»*, https://laboratorymskh.wordpress.com/2025/08/21/%d5%a1%d5%b7%d5%b6%d5%a1%d5%b6%d5%a1%d5%b5%d5%ab%d5%b6-%d5%b4%d5%a1%d5%b6%d5%af%d5%a1%d5%be%d5%a1%d6%80%d5%aa%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d5%b0%d5%b8%d5%a2%d5%a5%d5%ac%d5%b5%d5%a1%d5%b6%d5%a1%d5%af%d5%a1/

ազատ հարթակ է[75]։

2025 թվականի հոկտեմբերյան հավաքի շրջանակներում, հասարակագիտական մասնախմբի իրականացրած նախագծերից էին ՀՀ ԿԳՄՍՆ «Գիտության շաբաթ» ծրագրին մասնակցությունը, «Ուսումնական աշունը Սյունիքում» ճամփորդությունը, գործընկեր-դպրոցների հյուրընկալությունը և այլն[76]։

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրը, իրականացնելով հեղինակային կրթական ծրագիր, ամեն տարի կազմակերպում է մայիսյան ստեղծագործական հավաքներ, որոնք դարձել են կրթահամալիրի կրթական և մշակութային կյանքի կարևոր մաս։ Մայիսյան ստեղծագործական հավաքները եզակի և կարևոր միջոցառումներ են, որոնք համախմբում են սովորողներին, ուսուցիչներին և համայնքի անդամներին՝ ներկայացնելու իրենց ստեղծագործական նախագծերի հաջողությունները։ Այս հավաքներն անցկացվում են ամեն տարի մայիսին և նպատակ ունեն խթանել սովորողների և ուսանողների ստեղծագործականությունը, նորարարությունն ու համագործակցային հմտությունները։

**Մայիսյան հավաքների նպատակներն են.**

- Հավաքների ընթացքում սովորողները հնարավորություն ունեն ներկայացնելու իրենց ստեղծագործական աշխատանքները՝ նկարներ, քանդակներ, ՏՀՏ ծրագրեր, գրական ստեղծագործություններ, թարգմանություններ, երաժշտական, պարային, մարզական և թատերական ներկայացումներ։ Սա խթանում է նրանց ստեղծարարությունը և ինքնարտահայտումը։

[75] Մանկավարժության լաբորատորիա, հոդված, 21 օգոստոսի, 2025թ., *«Աշնանային ամենամյա 20-րդ տոնական հավաքի ուղեցույց»,* https://laboratorymskh.wordpress.com/2025/08/21/%d5%a1%d5%b7%d5%b6%d5%a1%d5%b6%d5%a1%d5%b5%d5%ab%d5%b6-%d5%a1%d5%b4%d5%a5%d5%b6%d5%a1%d5%b4%d5%b5%d5%a1-20-%d6%80%d5%a4-%d5%b0%d5%a1%d5%be%d5%a1%d6%84%d5%ab-%d5%b8%d6%82%d5%b2%d5%a5%d6%81%d5%b8/

[76] Վ. Կարապետյան, հոդված, 29 սեպտեմբերի, 2025թ., *«Աշնանային ստեղծագործական 20-րդ հավաք. հոկտեմբերի 1-24»,* https://vardankarapetyan.wordpress.com/2025/09/29/%d5%a1%d5%b7%d5%b6%d5%a1%d5%b6%d5%a1%d5%b5%d5%ab%d5%b6-%d5%bd%d5%bf%d5%a5%d5%b2%d5%ae%d5%a1%d5%a3%d5%b8%d6%80%d5%ae%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-20-%d6%80%d5%a4-%d5%b0%d5%a1%d5%be%d5%a1%d6%84-%d5%b0%d5%b8/

- Հավաքները խրախուսում են սովորողների միջև համագործակցությունը: Նրանք աշխատում են խմբերով, միասին մշակելով և ներկայացնելով իրենց նախագծերը, ինչը զարգացնում է նրանց թիմային աշխատանքի հմտությունները:
- Մայիսյան ստեղծագործական հավաքները խրախուսում են մասնակիցների մոտ հետազոտական մոտեցումների կիրառումը: Նրանք հնարավորություն ունեն ուսումնասիրելու տարբեր թեմաներ, կատարելու փորձարկումներ և ներկայացնելու իրենց հետազոտությունների արդյունքները:
- Հավաքների ընթացքում մասնակիցներն ունեն հնարավորություն ներկայացնելու իրենց աշխատանքները և աշխատարանները համայնքի և համայնքից դուրս գործընկեր-անդամներին: Սա խթանում է համայնքի ներգրավվածությունը կրթական գործընթացում և աջակցում է դպրոց, քոլեջ-համայնք կապերի ամրապնդմանը, որն էլ մեծ հնարավորություն է տալիս գնահատելու նրանց աշխատանքները և խրախուսելու ստեղծագործական մոտեցումները: Մայիսյան հավաքի ժամանակ տրամադրում են անվանական մրցանակներ, որով էլ գնահատվում են սովորողը, ուսանողը և մանկավարժը:
- Ստեղծագործական հավաքները հնարավորություն են տալիս համայնքի անդամներին մասնակցելու կրթական գործընթացում՝ աջակցելով ուսանողներին և ծանոթանալով նրանց աշխատանքներին:
- Հավաքի բաղադրիչ են վարպետաց դասերը, որոնք ուղղված են մասնակիցներին նոր հմտություններ փոխանցելուն[77]:

Ընդհանուր առմամբ, կազմակերպվող հավաքների աշխատանքներին ներգրավվում են կրթահամալիրի բոլոր մասնաճյուղ-դպրոցների, հատկապես՝ ավագ դպրոց-հետազոտական վարժարանի սովորողները՝ ցուցադրելով և զարգացնելով

[77] «Մխիթար Սեբաստացի» պաշտոնական կայքէջ, հոդված, *«Մայիսյան ստեղծագործական հավաք՝ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում»*, https://mskh.am/posts/post/_id/67d3b763816fd94b6318f1c2

իրենց հմտությունները, ձեռք բերելով ծանոթություններ, խորացնելով իրենց գիտելիքները տարբեր բնագավառներում: Հավաքները, ըստ էության, իրենց ամբողջ բովանդակությամբ և տրամաբանությամբ ներկայանալու և ներկայացնելու, սովորելու և սովորեցնելու, կրթելու և կրթվելու հարթակ են:

## 3.2 Անվանական շաբաթները, ստուգատեսները, նրանց կազմակերպման կարգը, գաղափարը, նպատակները

Խոսելով ամենամյա աշնանային և գարնանային հավաքների մասին՝ էական է հիշատակել նաև դրանց ընթացքում կազմակերպվող անվանական շաբաթները, որոնք նվիրված են ականավոր ու հանրահայտ պետական-քաղաքական, հասարակական, մշակութային գործիչների կյանքին և գործունեությանը: Ըստ այդմ, կրթահամալիրում ուսումնական տարվա ընթացքում անցկացվում են ներքոհիշյալ անվանական շաբաթները.

1. Սիրադեղյանական օրեր (նվիրված պետական, քաղաքական, հասարակական գործիչ, արձակագիր Վանո Սիրադեղյանի հիշատակին),
2. Սեբաստացու օրեր (նվիրված հայագետ, Մխիթարյան միաբանության հիմնադիր, կրթահամալիրի անունը կրող Մխիթար Սեբաստացու հիշատակին),
3. Թումանյանական օրեր (նվիրված Ամենայն հայոց բանաստեղծ, հռչակավոր գրող Հովհաննես Թումանյանի հիշատակին),
4. Հայրապետյանական օրեր (նվիրված հայտնի հրապարակախոս, քաղաքագետ Տիգրան Հայրապետյանի հիշատակին),
5. Ուսումնական օրացույցով սահմանված այլ հոբելյանական և ծիսական օրեր:

Բոլոր վերոնշյալ օրեր-հավաքներն իրականացվում են հանրությանն հայտնի, կրթահամալիրի և պետության զարգացման, ամրապնդման գործում մեծ ներդրում ունեցած հայերի կյանքին, գործունեությանը նվիրված «իրազեկման արշավներ»,

գիտահետազոտական աշխատանքներ, երկերի վերլուծություններ։ Հասարակագիտական մասնախմբի համակարգմամբ, կրթահամալիր են հրավիրվում հայտնի գործիչների հետ բարեկամական, աշխատանքային կապեր ունեցող անձինք. նախաձեռնվում են կլոր սեղան-քննարկումներ[78], սահիկաշարով ներկայացումներ, բանախոսություններ, այցելություններով գործիչների թանգարաններ, բնակավայրեր, հանդիպումներ տեղի բնակչության հետ[79]։

Ստուգատեսները՝ որպես ուսումնական գործունեության այլ ձև, նախատեսվում են կրթական ծրագրի և (կամ) ուսումնական կենտրոնի տարեկան ծրագրով։ Ստուգատեսը նախապատրաստում և կազմակերպում են դասավանդողները և սովորողները միասին՝ որպես ուսումնական նախագիծ։ Ստուգատեսի նախապատրաստման համար ստուգատեսից առնվազն մեկ ամիս առաջ կրթահամալիրի տնօրենի հրամանով որոշվում է նախագծի համակարգողը, որը պատասխանատու է թե՛ նախագծերի մշակման և իրագործման, թե՛ կրթահամալիրի տնօրենի հաստատմանն ներկայացվող ստուգատեսին հայտագրված աշխատանքների գնահատող հանձնաժողովի կազմն ու աշխատակարգը, թե՛ ստուգատեսի թափանցիկության ապահովման, հրապարակային լուսաբանման, և թե՛ մանկավարժության կենտրոնին ներկայացվող բովանդակային հաշվետվության համար։ Դասավանդողը, ըստ էության, հանդիսանում է համակարգող-կոորդինացնող մենթոր, առաջնորդ, խորհրդատու և ավագ ընկեր։

---

[78] Պատմություն և հասարակագիտություն դասավանդողների մասնախումբ, հոդված, 14 նոյեմբերի, 2022թ., *««Վանո Սիրադեղյան քաղաքական, պետական, հասարակական գործիչը» կլոր սեղան. ամփոփում»,* https://hasarakaget.wordpress.com/2022/11/14/%d5%be%d5%a1%d5%b6%d5%b8-%d5%bd%d5%ab%d6%80%d5%a1%d5%a4%d5%a5%d5%b2%d5%b5%d5%a1%d5%b6-%d6%84%d5%a1%d5%b2%d5%a1%d6%84%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d5%ba%d5%a5%d5%bf%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d5%b0/

[79] Վ. Կարապետյան, հոդված, 23 նոյեմբերի, 2023թ., *«Սիրադեղյանական օրերի ամփոփումը Վանո Սիրադեղյանի ծննդավայր Կոթիում»,* https://vardankarapetyan.wordpress.com/2023/11/23/%D5%BD%D5%AB%D6%80%D5%A1%D5%A4%D5%A5%D5%B2%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D6%85%D6%80%D5%A5%D6%80%D5%AB-%D5%A1%D5%B4%D6%83%D5%B8%D6%83%D5%B8%D6%82%D5%B4%D5%A8-%D5%BE%D5%A1%D5%B6%D5%B8/

**Ստուգատեսին ուղղված պահանջներ.**

- կրթական բոլոր աստիճանների սովորողների, ստուգատեսի բովանդակությամբ որոշված՝ կրթահամալիրի համապատասխան մասնագիտական խմբի (խմբերի) բոլոր մանկավարժական աշխատողների մասնակցության ապահովում.
- ըստ ստուգատեսի ուղղվածության՝ տարբեր բնագավառների ծրագրերով իրականացված ուսումնական նախագծերի ներառում.
- ստուգատեսի ծրագրում հեղինակային կրթական ծրագրի կազմակերպման և արդյունքների ցուցադրություն-ներկայացումների, վարպետության դասերի, մեկնարկի ասուլիսի, ամփոփիչ կլոր սեղանի կազմակերպում.
- ստուգատեսի կազմակերպիչների և մրցանակային հանձնաժողովի տարորոշում.
- ստուգատեսի աշխատանքների գնահատման մեջ տարբեր բնագավառների մասնագետների, ծնողների, կրթահամալիրի շրջանավարտների, ոլորտի գործընկեր մասնագետների ընդգրկում.
- ստուգատեսի արդյունքների ամփոփում ստուգատեսին հաջորդող մեդիաուրբաթ-համերգին[80]:

Ստուգատեսների կազմակերպումն իրականացվում է Արևելյան, Արևմտյան, Հյուսիսային, Հարավային դպրոց-պարտեզների, Միջին դպրոցի, Հետազոտական վարժարանի, քոլեջի կողմից հաստատված նախագծերով: Այս ձևաչափը թույլ է տալիս մասնակցին ցուցադրել իր գիտելիքները, հմտություններն ու ստեղծագործական ներուժը տարբեր դրսևորումներով և համագործակցային միջավայրում:

---

[80] «Մխիթար Սեբաստացի» պաշտոնական կայքէջ, հոդված, *«Ստուգատեսի կազմակերպման կարգ»*, https://posts.mskh.am/post/title/%D5%8D%D5%BF%D5%B8%D6%82%D5%A3%D5%A1%D5%BF%D5%A5%D5%BD%D5%AB%20%D5%AF%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A5%D6%80%D5%BA%D5%B4%D5%A1%D5%B6%20%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3

**Հինգ ստուգատեսները՝**

1. Հանրակրթական Դիջիթեք,
2. Բնագիտության և տեխնիկական ստեղծագործության ստուգատես,
3. Մարմնամարզական ստուգատես,
4. Ձմեռային ազգագրական փառատոն,
5. Արտադրությամբ ուսուցման ստուգատես[81]:

### 3.2.1 Անվանական և «Ձմեռ պապ» մրցանակները

Համաձայն «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի տնօրենի 2025 թվականի փետրվարի 26-ի հրամանի՝ *«Կրթահամալիրի ամենամյա անվանական մրցանակները տրվում են.*

- *«Հակոբ Հակոբյան»՝ բնագիտատեխնիկական ստուգատեսի ամփոփումից հետո.*
- *«Տիգրան Հայրապետյան»՝ հասարակագիտական ամենամյա ստուգատեսի օրերին,*
- *«Ջոն Տիգրանին» ամենամյա հանդիսության ժամանակ.*
- *«Աիդա Պետրոսյան»,*
- *«Հեղինակային կրթական ծրագրի հեղինակ»,*
- *«Իմացումի հրճվանք»՝ հեղինակային կրթական ծրագրի մայիսյան ամենամյա հավաքի օրերին.*
- *«Մխիթար Սեբաստացի»,*
- *«Մուտք մանկավարժություն»,*

---

[81] Զարգացման ծրագիր, հոդված, 1 հունիսի, 2024թ., *«Ստուգատեսներ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում»,* https://naxakrtaran1.wordpress.com/2024/06/01/%D5%BD%D5%BF%D5%B8%D6%82%D5%A3%D5%A1%D5%BF%D5%A5%D5%BD%D5%B6%D5%A5%D6%80-%D5%B4%D5%AD%D5%AB%D5%A9%D5%A1%D6%80-%D5%BD%D5%A5%D5%A2%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D6%81%D5%AB-%D5%AF%D6%80%D5%A9/

- *«Վահան Ասատրյան»,*
- *«Վարպետ Պետո»,*
- *«Վանո Սիրադեղյան»,*
- *«Ռուդիկ Հարոյան» ՝ Սեբաստացու օրեր-կրթահամալիրի տոնին»:*

Կրթահամալիրի մանկավարժական աշխատողը, մասնաճյուղի սովորողը սահմանված կարգով կարող են ինքնառաջադրվել կրթահամալիրի անվանական, «Ձմեռ պապ» մրցանակին: Հայտը հիմնավորվում է մրցանակի հավակնորդի բլոգում հրապարակված նյութերով:

Անվանական մրցանակի հայտին ներկայացվող պահանջները, մրցանակի մասին հայտարարությունը հաստատում է կրթահամալիրի մանաժողովը: Մրցանակակիրը կրթահամալիրում նույն անվանակարգով մեկից ավելի մրցանակ չի կարող ստանալ:

Անվանական մրցանակներ կարող են շնորհվել այն սովորողներին և դասավանդողներին (նաև նոր ընդունված), ովքեր նշանակալի ներդրում են ունեցել կրթահամալիրի զարգացման և հեղինակային կրթական ծրագրերի իրականացման մեջ, ինչպես նաև հետևողական նախաձեռնություններ են ցուցաբերել արտակարգ իրավիճակների հաղթահարման ուղղությամբ[82]: Այս համատեքստում, կարևոր է արձանագրել, որ կախված անվանական մրցանակից, դրա բնույթից և ուղղությունից, առաջադրվող թեկնածուի նկատմամբ պահանջները կարող են փոխվել: Վերոնշյալ ցուցակում կան մրցանակներ թե՛ սպորտի, թե՛ բնագիտամաթեմատիկական, թե՛ հումանիտար բնագավառներից:

---

[82] «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի գրասենյակ, Լ. Ազիզխանյան, հոդված, 26 փետրվարի, 2025թ., *«Կրթահամալիրում 2025թ. պարգևատրման միջոցները ձևավորելու, պարգևատրման, ամենամյա մրցանակների մասին»,* https://officemskh.wordpress.com/2025/02/26/%d5%af%d6%80%d5%a9%d5%a1%d5%b0%d5%a1%d5%b4%d5%a1%d5%ac%d5%ab%d6%80%d5%b8%d6%82%d5%b4-2025%d5%a9-%d5%ba%d5%a1%d6%80%d5%a3%d6%87%d5%a1%d5%bf%d6%80%d5%b4%d5%a1%d5%b6-%d5%b4%d5%ab%d5%bb%d5%b8%d6%81%d5%b6/

Հեղինակային կրթական ծրագրով, կրթահամալիրի ուսումնական օրացույցով որոշված մայիսյան ամենամյա 20-րդ ստեղծագործական հավաքի օրերին հանձնվում են ամենամյա «Հեղինակային կրթական ծրագրի հեղինակ», «Իմացումի հրճվանք», «Աիդա Պետրոսյան» մրցանակները[83]։

Կրթահամալիրում անվանական մրցանակները շնորհվում են՝ խրախուսելու այն սովորողներին և դասավանդողներին, որոնք նշանակալի ներդրում ունեն կրթահամալիրի զարգացման ծրագրերում, այդ թվում՝ նոր ռեսուրսների ստեղծման գործում, գնահատելու անհատների բացառիկ նախաձեռնողականությունը և հետևողական աշխատանքը՝ ուղղված կրթական գործընթացի բարելավմանը, հետաքրքիր և ուսուցողական նախագծերի իրականացմանը։ Դրանք ծառայում են որպես մասնագիտական և քաղաքացիական ակտիվության ճանաչման և խրախուսման առանձնահատուկ միջոց։

Նշենք նաև, որ ստեղծվել է հատուկ հարթակ, որտեղ ներկայացված են նախորդ տարիներին մրցանակների արժանացած թեկնածուները և նրանց աշխատանքները[84]։

Սովորողների՝ կրթական միջավայրում ինտեգրման, տաղանդների ու կարողությունների բացահայտման, մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքների շրջանակներում, ավագ դպրոց-հետազոտական վարժարանում դասավանդողների ու նախագծային խմբերի կողմից ամենամյա ձմեռային, ամառային ճամբարների, ստուգատեսների, անվանական շաբաթների

---

[83] Մանկավարժության կենտրոն, Լ. Փաշայան, հոդված, 22 ապրիլի, 2025թ., *«Մայիսյան հավաք 2025։ Անվանական մրցանակներ»,* https://pedagogicalclubmskh.wordpress.com/2025/04/22/%D5%B4%D5%A1%D5%B5%D5%AB%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%BE%D5%A1%D6%84-2025%D6%89-%D5%A1%D5%B6%D5%BE%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B4%D6%80%D6%81%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%B6%D5%A5/

[84] «Մխիթար Սեբաստացի» պաշտոնական կայքէջ, հոդված, *««Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի անվանական մրցանակակիրներ»,* https://posts.mskh.am/post/title/%C2%AB%D5%84%D5%AD%D5%AB%D5%A9%D5%A1%D6%80%20%D5%8D%D5%A5%D5%A2%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D6%81%D5%AB%C2%BB%20%D5%AF%D6%80%D5%A9%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AC%D5%AB%D6%80%D5%AB%20%D5%A1%D5%B6%D5%BE%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%B4%D6%80%D6%81%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%AF%D5%AB%D6%80%D5%B6%D5%A5%D6%80

ժամանակ կազմակերպվում են ինտելեկտուալ խաղ-մրցույթներ[85], որոնք նպաստում են նաև սովորողների աշխարհայացքի ընդլայնմանը, գիտելիքների պաշարի ավելացմանը, իսկ կամավորական գործունեությունը (տարաբնույթ ձևաչափերով) օգնում է սովորողներին դառնալ առավել ինքնուրույն, ազատ, պատասխանատու և աչալուրջ։ Վարժարանի սովորողները հաճախ մասնակցում են նաև փառատոնների[86]՝ ներկայացնելով իրենց ստեղծած սարքավորումները, արհեստագործական իրերը, ինչպես նաև յուրօրինակ «Սեբաստացի» գինի-ապրանքանիշը[87]։ Հասարակագիտական մասնախմբի համակարգմամբ՝ սովորողները մասնակցում են տարբեր գիտաժողովների[88], հումանիտար բնագավառի փառատոնների[89] հանդես են գալիս զեկույցներով, ձեռք են բերում ծանոթություններ։

Որպես օրինակ, DigiTech Armenia-ի 20-ամյա հոբելյանական ցուցադրությանը Սեբաստացի Տեխնոլաբի ներկայացրած սարքերը, խաղերը, հնարավորություններն ու կամավոր սեբաստացիները երեք օրերին էլ ապահովել են տաղավարի մարդաշատությունը[90]։ Մասնակցության հովանավորը հանդիսացել է «Սեբաստացիներ» կրթական հիմնադրամը։ Հակիրճ անդրադարձ կատարենք նաև

---

[85] Է. Ագջոյան, հոդված, 7 ապրիլի, 2025թ., *«Ֆուտբոլային ինտելեկտուալ մրցաշար»*, https://emanuelagjoyan.blogspot.com/2025/04/blog-post.html

[86] Լ. Ցախինյան, հոդված, 24 սեպտեմբերի, 2025թ., *«Հայաստանի գույները։ Զրաններկի փառատոն Գյումրիում»*, https://lilithculture.wordpress.com/2025/09/24/%d5%b0%d5%a1%d5%b5%d5%a1%d5%bd%d5%bf%d5%a1%d5%b6%d5%ab-%d5%a3%d5%b8%d6%82%d5%b5%d5%b6%d5%a5%d6%80%d5%a8%d6%89-%d5%bb%d6%80%d5%a1%d5%b6%d5%a5%d6%80%d5%af%d5%ab-%d6%83%d5%a1%d5%bc%d5%a1%d5%bf%d5%b8/

[87] «Մխիթար Սեբաստացի» պաշտոնական կայքէջ, հոդված, 5 հունիսի, 2025թ., *«Սեբաստացի գինին՝ «Երևանի Գինու օրեր 2025» միջոցառմանը»*, https://mskh.am/posts/post/_id/6843e0b96ae32dcbc1b2f9e0

[88] Պատմություն և հասարակագիտություն դասավանդողների մասնախումբ, հոդված, 15 հոկտեմբերի, 2024թ., *««Հայագիտության արդի խնդիրները և զարգացման հեռանկարները» միջազգային գիտաժողովի ամփոփում»*, https://hasarakaget.wordpress.com/2024/10/15/%d5%b0%d5%a1%d5%b5%d5%a1%d5%a3%d5%ab%d5%bf%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%a1%d5%b6-%d5%a1%d6%80%d5%a4%d5%ab-%d5%ad%d5%b6%d5%a4%d5%ab%d6%80%d5%b6%d5%a5%d6%80%d5%a8-%d6%87-%d5%a6%d5%a1%d6%80%d5%a3/

[89] «Մխիթար Սեբաստացի» պաշտոնական կայքէջ, հոդված, 4 հոկտեմբերի, 2025թ., *«Մասնակցություն «Գիտության շաբաթ» փառատոնին. լուսաբանում»*, https://mskh.am/posts/post/_id/68e4ba8cca1a37ec23077299

[90] «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր, ֆեյսբուքյան պաշտոնական կայքէջ, լուսաբանում, https://www.facebook.com/share/r/1LERknqGtq/

«Սեբաստացիներ» կրթական հիմնադրամին և դրա գործունեությանը:

«Սեբաստացիներ» կրթական հիմնադրամը կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություն է, որը հետապնդում է կրթական, մշակութային, գիտական, բարեգործական և այլ հանրօգուտ նպատակներ:

Հիմնադրամի հիմնական նպատակներն են՝ միավորել սեբաստահայերի, հայաստանցիների և Մխիթարյան վարժարանների շրջանավարտների ուժերն ու հնարավորությունները՝ կրթական, մշակութային և հայրենագիտական նախագծեր և ծրագրեր իրականացնելու համար, ինչպես նաև աջակցել ՀՀ ԿԳՄՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրին»՝ իր կանոնադրական խնդիրներն իրագործելու, շենքային ու գույքային պայմանները բարելավելու, ուսումնական սարքավորումներ ու գրականություն ձեռք բերելու, սպորտային, մշակութային, կրթական միջոցառումներ կազմակերպելու, սովորողների և ուսուցիչների ներհանրապետական ու միջազգային կրթական փոխանակումներն ու կապերը խթանելու, կրթահամալիրի մանկավարժությունը տարածելու և այլոց առաջավոր փորձը յուրացնելու գործում: Այս համատեքստում, հիմնադրամը նաև դրամաշնորհային ծրագրեր է իրականացնում ավագ դպրոց-հետազոտական վարժարանում՝ հետազոտական տարաբնույթ աշխատանքներ իրականացնող սովորողներին խրախուսելու նպատակով[91]:

---

[91] «Սեբաստացիներ» կրթական հիմնադրամ, Է. Սահակյան, հոդված, *««ՍԵԲԱՍՏԱՑԻՆԵՐ» կրթական հիմնադրամ»*, https://himnadram.edublogs.org/%d5%bd%d5%a5%d5%a2%d5%a1%d5%bd%d5%bf%d5%a1%d6%81%d5%ab%d5%b6%d5%a5%d6%80-%d5%af%d6%80%d5%a9%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d5%b0%d5%ab%d5%b4%d5%b6%d5%a1%d5%a4%d6%80%d5%a1%d5%b4/

# 4. Հետազոտական աշխատանքը

Հետազոտական աշխատանքն ավագ դպրոցի սովորողի համար պարտադիր ուսումնական աշխատանք է՝ որոշված իր անհատական ուսումնական պլանով: Հետազոտական աշխատանքի բացակայությունը կարող է հիմք հանդիսանալ ուսումնական պայմանագրի լուծման համար:

Հետազոտական աշխատանքի բովանդակությունը պետք է համապատասխանի ինչպես ուսումնական պլանով որոշված ընդհանուր, այնպես էլ սովորողի ընտրությամբ դասընթացների բաղադրիչների ծրագրերին:

Ուսումնական հաստատության հետազոտական աշխատանքների կազմակերպման կարգը սահմանում է, որ 10-րդ և 11-րդ դասարանների սովորողները աշխատանքի թեմա և ղեկավար են ընտրում չորրորդ ուսումնական շրջանում, հայտագրվում հունիսյան ճամբարի վերջին շաբաթվա ընթացքում, իսկ 10-րդ դասարան փոխադրվածները՝ սեպտեմբերյան նախագծային շաբաթվա ընթացքում, մինչդեռ ուսումնական տարվա ընթացքում ընդունվածները հայտագրվում են մեկ շաբաթվա ընթացքում: Բոլոր հայտագրված թեմաները հաստատվում են համապատասխան մասնախմբերի և լաբորատորիաների կողմից:

Դասավանդողները խորհրդատվություն են տրամադրում թեմայի ընտրության և պահանջների վերաբերյալ, սակայն և՛ դասավանդողը, և՛ սովորողն իրավունք ունեն հրաժարվելու ղեկավարումից (կամ ղեկավարից)՝ համապատասխան պատճառաբանությամբ: Հետազոտական աշխատանքների հանրային պաշտպանության ժամկետները սահմանված են հետևյալ կերպ. 12-րդ դասարանների համար՝ մինչև առաջին ուսումնական շրջանի ավարտը, իսկ 10-11-րդ դասարանների համար՝ մինչև երրորդ շրջանի ավարտը: Նշենք նաև, որ աշխատանքի կատարման ձախողումը կարող է հանգեցնել կրթական պայմանագրի լուծման:

Հիմնվելով նախորդ տարիների փորձի և կուտակված մեթոդական պաշարի վրա՝ կրթահամալիրը հստակ սահմանել է հետազոտական աշխատանքին

ներկայացվող բովանդակային պահանջները, կառուցվածքային սկզբունքները և ձևավորման չափանիշները[92]: Այս կանոնակարգումների առանցքային նպատակն է նպաստել սովորողների հետազոտական և վերլուծական հմտությունների հետևողական զարգացմանը՝ նրանց սովորեցնելով ինքնուրույն ձևակերպել գիտական խնդիրներ, ընտրել համապատասխան մեթոդաբանություն և կատարել փաստարկված եզրահանգումներ:

Սահմանված հստակ ուղեցույցը սովորողին ընձեռում է անհրաժեշտ գործիքակազմ՝ ակադեմիական պատշաճ մակարդակով ինքնադրսևորվելու և սեփական ուսումնասիրությունները ներկայացնելու համար:

Կրթահամալիրում գործող «Դպիր»[93] մանկավարժական ամսագրում առանձնացվել է հետազոտական աշխատանքի ընտրանի[94], որում շուրջտարյա կտրվածքով պարբերաբար թարմացվում և համալրվում է: Ընտրանիում տեղ են գտնում առավել ստացված, իրենց հիմնական նպատակին ծառայած, գիտական ու կառուցվածքային առումներով պատշաճորեն կատարված, լուսաբանված և հանրայնորեն ներկայացված աշխատանքները:

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի ավագ դպրոց-մասնաճյուղը, այս համատեքստում, վերածվել է «հետազոտական վարժարանի»՝ սովորողների կողմից չորրորդ տարին արդեն իրականացվող հետազոտական աշխատանքների

---

[92] Մ. Սարգսյան, Ա. Տիգրանյան, Ա. Ոսկանյան, Մանկավարժության լաբորատորիա, հոդված, 14 հոկտեմբերի, 2025թ., *«Հետազոտական աշխատանք. 2025-2026»,* https://laboratorymskh.wordpress.com/2025/10/14/%D5%B0%D5%A5%D5%BF%D5%A1%D5%A6%D5%B8%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D6%84%E2%80%A4-2025-2026/

[93] «Դպիր» մանկավարժական հանդես, *«Դպիր» մանկավարժական հանդեսը հարթակ է, որտեղ կրթահամալիրի դասավանդողները (ինչպես նաև գործընկեր-կազմակերպությունների ներկայացուցիչները) ներկայացնում են իրենց կողմից համակարգված աշխատանքների, նախագծերի արդյունքները, ամփոփումներն ու հաշվետվությունները, բարձրաձայնում են կրթության ու մանկավարժության ոլորտներին առնչվող արդի խնդիրներ, ներկայացնում թեմաների վերլուծություններ, կարծիքներ, դիրքորոշումներ:* https://dpir.am/

[94] «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր, Հետազոտական վարժարան, բաժին, ստեղծված՝ 2024թ., *«Հետազոտական աշխատանքներ»,* https://dpirresearchwork.wordpress.com/

իրականացման շնորհիվ:

Հետազոտական աշխատանքները՝ որպես անձի ձևավորման, նրա գիտակցականության, լեզվամտածողության, աշխարհայացքի կառուցման գործում էական ներդրում ունեցող գործոն, ընդհանրական կերպով ընձեռում են ինքնազարգացման, ինքնաբացահայտման մի շարք հնարավորություններ:

